Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

12(717)
2025
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ ● Lusarar

Ամանորյա բարեմաղթանքի փոխարեն

ԱՌԱՆՑ ՍՓՅՈՒՌՔԻ ՉԿԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստանին սպառնացող մարտահրավերներից մեկն էլ Սփյուռքի հետ կենսական կապի աստիճանական խզումն է: Այս միտումն առկա է հատկապես իշխանություն-եկեղեցի հարաբերությունների, մեղմ ասած, սառնության համապատկերին: Տվյալ պարագան հաճախ քննարկում են դավանաբանական տիրույթում, սակայն դա ավելի շատ համազգային խնդիրների հարթության մեջ է:

Հայաստանի Հանրապետությունում կարող են, անշուշտ, ընթանալ գործընթացներ, որոնք բացառապես հայաստանյան իրականության մաս են կազմում, և այդտեղ Սփյուռքը մասնակցության ու առավելս՝ միջամտության իրավասություն չունի: Բայց եթե որևէ գործընթաց համահայկական շահերի ծիրում է, ապա այն չի կարող հանդիսանալ միայն Հայաստանի խնդիրը: Ստույգ դեպքում, Հայ առաքելական եկեղեցու շուրջ տեղի ունեցող զարգացումները դրան են հանգում:

Թերևս հարկ չկա հիշեցնելու սահմանադրական այն դրույթները, ըստ որոնց՝ ՀՀ-ում կրոնական կազմակերպություններն անջատ են պետությունից, և որ ՀՀ-ն ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային ինքնության պահպանման գործում: Ինքնին հասկանալի է, որ առաքելական հավատի կրողները ոչ միայն ՀՀ-ում ապրող հայ ազգաբնակչությունն է, այլև ի սփյուռս տարածված հայությունը, որոնց թիվն անհամեմատ ավել է հայաստանաբնակներից: Ասել է թե՝ հոգևոր ոլորտի խնդիրները նույն հավատի բոլոր հետևորդներինն են:

Եկեղեցու պառակտմամբ քանդվում է հայ ժողովրդի հոգևոր միասնությունը, որը մեր ազգային ամբողջականության առանցքն է: Երկրները տարբեր են իրենց աշխարհաքաղաքական շահախնդրություններով, և այդ երկրներում ապրող հայերը ակամայից դառնում են պետականահպատակ որդեգրումների կրողը, բայց հայությունը պետք է ներհյուսված մնա համազգային խնդիրներին, ինչը հնարավոր է բացառապես հոգևոր-ազգային միաբանության պայմաններում: Գոնե վերջին առնվազն մեկուկես հազարամյակում հայ ժողովուրդն այդկերպ է գոյատևել:

Թվում է, այս իմաստով Սփյուռքը «միջամտության մանդատ» ունի, հասկանալի է, բարոյահոգեբանական լծակներով: Ոչ միայն արտերկրի ՀԱԵ կառույցները, այլև հայ հասարակական, կրթամշակութային և այլ հաստատությունները պետք է նպատակադիր զսպվածության կոչ անեն հոգևոր կռվադաշտի կողմերին. մեկին՝ երկրում քաղաքական խնդիրներից հեռու մնալու, մյուսին՝ եկեղեցու գործերին չմիջամտելու հորդորներով: Հակառակ պարագայում, անտարբերության անջրպետն ավելի է խորանալու Սփյուռքի և Հայաստանի միջև, ինչի աղետալի հետևանքները հնարավոր է պատկերացնել:

Մենք մի ժամանակ ասում էինք. «Առանց Արցախ չկա Հայաստան»: Հետևողական չեղանք մեր կոչին, և դրա դառն հետևանքներն այսօր ճաշակում ենք: Մոտավորապես նույնը կարող ենք հիմա ասել. «Առանց Սփյուռքի՝ չկա Հայաստան»: Այս կարգախոսի անտեսումը հաստատապես կբերի, ինչպես լեգենդար Ավոն էր ասում, հայոց պատմության վերջին էջը փակելուն:

Հայ ազգի միաբանության, հայության հարցերը միասնաբար լուծելու գաղափարը պետք է մշտապես գտնվի յուրաքանչյուր հայի օրակարգում աշխարհի որ ծագում էլ նա ապրելիս լինի:

Գալիք 2026 թվականը կարող է շրջադարձային լինել՝ կապված ՀՀ-ում կայանալիք խորհրդարանական ընտրությունների հետ: Տա՛ Աստված, այն համազգային նոր զարթոնքի սկիզբ դառնա, ինչպես որ 1988-ի փետրվարին էր:

Շնորհավո՛ր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԵՎ ՀՐԴԵՀ Է ՍՐՏԵՐԻ ՄԵՋ ՈԳԻՆ ՀԱՅԿՅԱՆ

Գնում եմ դեռ ճանապարհի հիշողության բաց եզերքով,
գլորվում են աչքերս հանց տեսողության կափարիչներ,
սուրբ վայրերը շղթաներից ազատվել են խաչ ու զենքով,
սակայն փխրուն սաղարթներով սողոսկել են բիրտ կարիճներ,
սողոսկե՛լ են երակներով և պաշարել սիրտը երկրի,
ի՞նչ պատեր ենք դարձյալ շարել՝ համառորեն ծակծկե՞լ են,
զանգ է պայթել այրող խորքում արևային կանաչ հերկի,
զեռուններն են անմնացորդ արդարության ծածկը կերել
և անցել են տագնապների կարմիր կետից…

Գնում եմ դեռ ճանապարհի հիշողության բաց եզերքով,
լեռներն ի վեր ծիկրակում է հորիզոնը ասելիքի,
որպես երկրորդ շնչառություն՝ ծավալվում ենք գիր ու զորքով,
կասեցընում և այրում ենք բացիլները արհավիրքի:
Հողի պայծառ հուրն է լցվում աչքերի մեջ հիշողության՝
երանգ-երանգ և ցոլք առ ցոլք վերածվելով կակաչների,
կամքի եռուն հնոցներում ամրանում է հույսը մանկան,
հորդաբուխ է շունչը նախնյաց օազիսում մեր կանչերի,
և հրդեհ է սրտերի մեջ ոգին Հայկյան:

Ռոբերտ ԵՍԱՅԱՆ

Տես նաև՝էջ 8

ԼԵՎՈՆ ԽԵՉՈՅԱՆ. «ԵՍ ԱՄԲՈՂՋ ԿՅԱՆՔՈՒՄ ԵՐԱԶԵԼ ԵՄ ՈՒՆԵՆԱԼ ԹԱԳԱՎՈՐ, ՈՎ ԻՍԿԱՊԵՍ ՈՒԺԵՂ ԿԼԻՆԻ, ՀԱՅՐԵՆԻՔԻ ՇԱՀԸ ԲԱՐՁՐ ԿԴԱՍԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՇԱՀԻՑ»

2013թ. հունիսին Լևոն Խեչոյանը հերթական անգամ այցելել է Արցախ: Դա նրա վերջին այցն էր: Գրողի հետ հանդիպում էր կազմակերպվել «Գրիգոր Նարեկացի» համալսարանում: Միջոցառումը վարում էր Լևոն Խեչոյանի մտերիմ ընկեր, գրող Կիմ Գաբրիելյանը: Եղան ելույթներ: Մասնավորապես, իր ելույթում Կիմ Գաբրիելյանը հետևյալն ասաց. «Հնարավոր չէ Լևոն Խեչոյանի մասին կարճ խոսել, որովհետև նա մեր իրականության մեջ գրական, հասարակական ու մտավոր մեծ ներուժով երևույթ է: Մենք շատ նվիրյալներ չունենք հայաստանաբնակ մտավորականներից, որոնք ուղղակի իմաստով մասնակցություն են ունեցել Ղարաբաղյան պատերազմին: 1989թ. Խեչոյանն Արցախ եկավ որպես լրագրող՝ լուսաբանելու Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունները: Ինքն այն ժամանակ աշխատում էր «Գարուն» ամսագրում՝ երջանկահիշատակ Վազգեն Սարգսյանի հետ միասին: Իսկ երբ հակամարտությունը ռազմական փուլ մտավ, նա կամավորագրվեց Ազատամարտին: Նոյեմբերյանից մինչև Օմար ընկած ռազմի բոլոր ճանապարհներով Լևոնն անցել է, և նրա լավագույն գործերն էլ հենց պատերազմի ժամանակ են ստեղծվել: Հրադադարի պահերին զինակիցներին իր շուրջը համախմբած՝ պատմում էր հիշարժան դրվագներ հայ ժողովրդի պատմությունից: Իսկ ապրվող կյանքը տող առ տող դառնում էր գրականություն, որն ընթերցողին ներկայացվեց պատերազմից անմիջապես հետո: Նրան կարելի է համեմատել Էռնեստ Հեմինգուեյի հետ, այն տարբերությամբ, որ Հեմինգուեյն առաջին համաշխարհային պատերազմ մեկնեց որպես զինվորական լրագրող, իսկ Խեչոյանը լրագրությունը թողել էր ու կամավոր զինվորագրվել»:

Կ. Գաբրիելյանն անդրադարձել է նաև Լևոն Խեչոյանի գրական-հասարակական գործունեությանը: Մասնավորապես, մատնանշելով «Պատերազմը և գրականությունը» թեմայով նրա հայտնի ելույթը, որով Խեչոյանը 2000 թվականին հանդես էր եկել Եվրոպայի Խորհրդում, բանախոսը նշեց, որ Խեչոյանի ելույթն այնքան տպավորիչ էր, որ անգամ ադրբեջանցի պատվիրակներն էին մոտեցել ու թույլտվություն խնդրել, որպեսզի ելույթը թարգմանաբար տպագրեն Բաքվում: Նրա գրականությունը զերծ է թշնամանքից, բայց մեծագույն սեր ու նվիրում կա հարազատ ժողովրդի հանդեպ: Այնքան մեծ է նրա հումանիզմը, որ հարևան Ադրբեջանում համացանցից վերցնում են Լևոն Խեչոյանի պատմվածքներն ու իրենց լեզվով հրատարակում: Ահա սա է գրողի իսկական մեծությունը. գրող, որ հայրենիքի համար վտանգի պահին գրիչը փոխարինել է զենքով՝ այդ մասին հաճախ համեստորեն լռելով: «Մենք պետք է մեզ երջանիկ զգանք, որ Լևոն Խեչոյանի ժամանակակիցն ենք»:



Իր ելույթում Լևոն Խեչոյանը հետաքրքիր համեմատություններ արեց՝ ընդգծելու համար գրողի իրական առաքելությունը: Նրա խոսքով, հին ժամանակներում վանական միաբանություններ կային, որտեղ ուշագրավ մի սովորություն կար. վանականներից ամեն մեկը հերթով կանգնում էր հսկումի: Իսկ ի՞նչ էր այդ հսկումը: Վանականը գիշերը մենակ գնում էր վանք և ամբողջ գիշեր ծնկաչոք աղոթում, որ չարը հայրենիքին չմոտենա, իր երկիրը թշնամուց չտուժի: Գրողը, արվեստագետն առհասարակ, նույն այդ վանականն է: Նա գիրք է գրում, նկարիչը նկարում է, երաժիշտն էլ սիմֆոնիա է գրում, և այս ամենը դառնում է յուրօրինակ հսկում, դառնում է ծնկաչոք աղոթք ապրողների համար:

Լևոն Խեչոյանը գրողին բնութագրող ևս մի հետաքրքիր համեմատություն արեց: «Գյուղում ապրողները կիմանան. ամենամութ, անձրևոտ, կայծակնահար գիշերը հովվի շունը ելնում, մի երկու բերան հաչում է մութի ուղղությամբ, թեպետ իրականում գայլն այնտեղ չէ: Բայց շունը հաչում է, որպեսզի գայլը ոչխարի հոտին չմոտենա: Գրողն այդ շունն է, որ մութի վրա հաչում է, որպեսզի ժողովուրդը խաղաղ քնի: Գրողն նաև այն մարդն է, աստված դրա համար է նրան ստեղծել, որպեսզի մահկանացու մարդիկ այս լույս աշխարհից մութ աշխարհ խաղաղ տեղափոխվեն, մարդիկ չվախենան մահից, ինքը բացատրի, որ մահի մեջ էլ գեղեցկություն կա: Ես հիմնականում դրանով եմ զբաղվում»:

Միջոցառման վերջում նաև հարցեր տրվեցին գրողին:

Այն հարցին, թե ինչն է արձակագրին մղել անդրադառնալու Արշակ 2-րդի կերպարին, երբ այդ կերպարը նախկինում ուրիշ գրողների՝ Ռաֆֆու, Ստ. Զորյանի, Պ. Զեյթունցյանի համար վիպական երկերի նյութ է հանդիսացել, Լևոն Խեչոյանն ասաց, որ պատճառը կրկնվող ժամանակն է. «Ես ամբողջ կյանքում երազել եմ ունենալ թագավոր, ով իսկապես ուժեղ կլինի, հայրենիքի շահը բարձր կդասի անձնական շահից: Արշակը հենց այդ տեսակն էր: Երբ նրան գերի վերցրին, մտածում էր, որ իր ազգը գերի թագավոր չպիտի ունենա: Համոզված էր, որ ժողովրդին ազատագրելու ճիշտ քայլը ի՛ր մահն է, ուստի ծառային հորդորեց դանակով սպանել իրեն: Արշակ արքան այդ քայլին գնաց, որպեսզի իրեն փոխարինած Պապ թագավորը զորքը չմխսի Անհուշ բերդի ճանապարհին, այլ պաշտպանի հայրենիքը: Պատմական այդ կերպարին անդրադառնալով՝ ես ուզում էի հենց այդպիսի թագավոր ունենալ»:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

(Տես նաև՝ էջ 4-5)

ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

«ԱՐՑԱԽ-ՍՅՈՒՆԻՔԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ»՝ ԴՈԿՏՈՐԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀՆՈՅՈՒՄ

Դեկտեմբերի 5-ին ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում հայագիտության համար նշանակալից իրադարձություն արձանագրվեց: Ինստիտուտի գիտաշխատող, լեզվաբան, բ.գ.թ., դոցենտ Միեր Քումունցը հաջողությամբ պաշտպանեց «Արցախ-Սյունիքի բարբառային բառապաշարը» թեմայով դոկտորական ատենախոսությունը:

Սա հայ պատմական բարբառագիտության մեջ բացառիկ աշխատանք է, քանի որ առաջին անգամ է համակարգված և ընդգրկուն քննության ենթարկվում Սյունիք-Արցախի բարբառային տարածքի պատմական բառապաշարը:

Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստը բացեց Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն, գիտխորհրդի նախագահ Վիկտոր Կատվալյանը: Նա հատուկ ընդգծեց թեմայի հրատապությունը՝ կապված վերջին տարիների ողբերգական իրադարձությունների հետ:

«Արցախում տեղի ունեցած ցավալի իրադարձություններից, հատկապես մեր հայրենիքի այդ հատվածի բռնի հայաթափումից հետո վտանգված է Արցախի բարբառը: Եթե նման աշխատանքներ չիրականացվեն, տարիներ անց կորստի կմատնվի Արցախի հարուստ ու գեղեցիկ բարբառը»,- իր խոսքում նշեց Վ. Կատվալյանը՝ կարևորելով բարբառային ժառանգության փաստագրումն ու գիտական ամրագրումը որպես ազգային-մշակութային խնդիր:

Իր ելույթում Միեր Քումունցը ներկայացրեց աշխատանքի ընդհանուր բնութագիրը՝ նշելով, որ մինչ օրս բարբառագիտական ուսումնասիրություններում հիմնական շեշտը դրվել է հնչյունաբանական և ձևաբանական առանձնահատկությունների վրա, մինչդեռ բառապաշարի համակարգային վերլուծությունը մնացել էր ստվերում:

397 էջից բաղկացած ատենախոսությունը նպատակ է հետապնդել լրացնել այդ բացը: Հեղինակը կատարել է Սյունիք-Արցախի բարբառների բառապաշարի պատմական շերտերի ամբողջական քննություն՝ կիրառելով պատմահամեմատական մեթոդը:

Աշխատանքում մանրամասն քննվել են նախահայերենյան (հնդեվրոպական) շերտի բառերը, հին հայերենի (գրաբարյան) բառաշերտերը, փոխառյալ շերտերը:

Հետազոտության արդյունքում առաջադրվել են ստուգաբանական նոր փորձեր, վերանայվել են որոշ բառերի՝ փոխառություն համարվելու տեսակետները, և բացահայտվել է բառապաշարի բնիկհայերենյան հարուստ շերտը: Դասակարգումն իրականացվել է ըստ Կ. Բաքի և Գ. Ջահուկյանի մշակած թեմատիկ սկզբունքի (23 իմաստային խմբերով):

Ըստ հեղինակի՝ ընդհանուր հայերենի համար արձանագրված հնդեվրոպական ծագման 2085 բառային միավորից Սյունիք-Արցախի բարբառներում պահպանվել է 1317-ը (63%-ից ավելին): Սա ապացուցում է, որ այս տարածաշրջանի բնակչությունը հազարամյակներ շարունակ անընդմեջ ապրել է բնիկ տարածքում՝ պահպանելով լեզվի հնագույն շերտերը:

Միեր Քումունցը հերքում է մի շարք բառերի՝ թուրքական կամ այլ լեզուներից փոխառյալ լինելու թյուր կարծիքները՝ ապացուցելով դրանց բնիկ հայկական ծագումը՝ «Աջըղ» (ոխ, վրեժ) - ոչ թե թուրքական է, այլ հայերեն «ջիղ» արմատից, «Լէլ» (տիղմ) - ոչ թե թուրքական է, այլ բնիկ հայերեն, «Քէչա» (թաղիք) կապվում է հին հայերենի «գէջ» արմատի հետ, «Անգ» (անգղ) - կապ չունի «տգեղ» բառի հետ (ժողովրդական ստուգաբանություն), այլ ծագում է հնդեվրոպական *ank- «ծռել» արմատից (կտուցի ձևով):

Աշխատանքը ցույց է տալիս, որ բարբառը հաճախ ավելի հին ձևեր է պահպանել, քան գրական լեզուն: Հայերենի բարբառներում վկայված 158 հնաբանություններից 127-ը կենդանի գործածվում են Սյունիք-Արցախի բարբառներում: Բացի այդ՝ բարբառը օգնում է լուծել լեզվաբանական վիճելի հարցեր (292 վիճելի բառերից 151-ի լուծումը տրվել է հենց այս բարբառի տվյալներով):

Աշխատությունը ցույց է տալիս, թե կենցաղի որ ոլորտներն են եղել ամենակայունը: Նախահայերենյան բառերը առավել շատ են պահպանված «ֆիզիկական աշխարհ», «մարմնի մասեր», «երկրագործություն» (սա խոսում է նստակյաց և հողագործ բնիկ ժողովուրդ լինելու մասին): Ամենաքիչ պահպանվածներն են՝ «ռազմական գործ», «առևտուր», «օրենք» (այս ոլորտներում շատ են օտար՝ պարսկական, արաբական փոխառությունները, քանի որ վարչական և քաղաքական կյանքը ենթարկվել է փոփոխությունների):

Ատենախոսությունը հերքում է այն տեսակետը, թե բարբառը գրաբարի աղավաղված տեսակն է: Բարբառի հիմքերը դրվել են նախագրային շրջանում (մինչև 5-րդ դար): Այն գրաբարի ոչ թե պասիվ կրողն է, այլ ակտիվ ժառանգորդը: Հաշվի առնելով Արցախի բռնի հայաթափումը՝ այս բարբառային միավորները կանգնած են կորստի վտանգի առաջ: Այս աշխատանքը կատարում է ոչ միայն գիտական, այլև ազգային-մշակութային ժառանգության փաստագրման առաքելություն:

Ատենախոսության պաշտոնական ընդդիմախոսներն էին բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսորներ Թերեզա Շահվերդյանը, Սերգո Հայրապետյանը և Էդուարդ Մկրտչյանը: Առաջատար կազմակերպությունն է ԵՊՀ-ն: Նրանք բարձր գնահատեցին կատարված հսկայածավալ աշխատանքը՝ շեշտելով դրա գիտական և կիրառական նշանակությունը:

Իր ելույթում պաշտոնական ընդդիմախոս, պրոֆեսոր Էդվարդ Մկրտչյանը բարձր գնահատեց ատենախոսության գիտական արժեքը: Նա առանձնահատուկ ուշադրություն դարձրեց հեղինակի կատարած ծանր և ծավալուն հետազոտական աշխատանքին և մանրամասն անդրադարձավ ատենախոսության մեջ բարձրացված առանցքային խնդիրներին՝ տալով դրական եզրակացություն:

«Հաշվի առնելով 2023 թվականի աշխարհաքաղաքական զարգացումները և Արցախի բնակչության բռնի տեղահանումը, տվյալ միջբարբառախմբի բառապաշարը, որը գոյություն ունի գրեթե բացառապես բանավոր խոսքում, կանգնած է անվերադարձ կորստի վտանգի առջև: Ատենախոսությունը կատարում է ազգային-մշակութային ժառանգության հրատապ փաստագրման և ամրագրման առաքելություն»,- նշված էր Ս. Հայրապետյանի կարծիքի մեջ:

«Ատենախոսությունն իր տեսական և գործնական նշանակությամբ կարևոր ներդրում է հայոց լեզվի պատմության, պատմական բառագիտության, բարբառագիտության և համեմատական լեզվաբանության մեջ: Այն հիմք է ստեղծում հետագա բառարանագրական, էթնոլեզվաբանական և պատմամշակութային ուսումնասիրությունների համար՝ հատկապես կարևորվելով վտանգված լեզվական ժառանգության պահպանման համատեքստում»,- նշեց պրոֆեսոր Թ. Շահվերդյանը:

«Իրականում մի առանձին գիտական աշխատանքի նյութ կարող է լինել հեղինակի առաջարկած ստուգաբանական, բառաքննական վերլուծությունների ստուգումը, ճշգրտումը, հաստատումը կամ մերժումը. այնքան ծավալուն ու բազմազան են դրանք»,- նշված էր առաջատար կազմակերպության կարծիքի մեջ:

Հարցուպատասխանից և քննարկումներից հետո տեղի ունեցավ գաղտնի քվեարկություն, որի արդյունքներով Միեր Քումունցին շնորհվեց բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Եզրափակիչ խոսքում նորընծա դոկտորը երախտագիտություն հայտնեց ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի ղեկավարությանը, գիտխորհրդին, պաշտոնական ընդդիմախոսներին և բոլոր աջակիցներին՝ աշխատանքը մանրակրկիտ ուսումնասիրելու և արժևորելու համար:

Կարևորում ենք նման հիմնարար աշխատությունների ստեղծումը, քանի որ մեր հայրենիքի կորսված հատվածների մշակութային և լեզվական ժառանգության ամրագրումն այսօր ունի ոչ միայն գիտական, այլև ռազմավարական ու ազգապահպան նշանակություն: Միեր Քումունցի աշխատությունը յուրօրինակ հուշարձան է՝ կանգնեցված Արցախի ու Սյունիքի բարբառային հարստությանը, որն այլևս ապահովագրված է մոռացության վտանգից:

Ջոհրաբ ԸՌՔՈՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ - ԱՎԱՆԴԱԿԱՆ

ԱՄԱՆՈՐՅԱ ԽՈՀԱՆՈՑԻ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐՈՒՄ

Ամանորին ընդառաջ՝ «Արարատյան արժեքների կրթական հիմնադրամը» կազմակերպել է հետաքրքիր մշակութային բանախոսություն՝ բացահայտելու, թե որոնք են հայկական ազգային տոնական սովորույթները և խոհանոցը:

Ամանորը տարվա ամենագլխավոր տոնն է ու ամենասպասվածը: Նրա կարևորագույն պայմաններից մեկը խոհանոցն է, որը հայ իրականության մեջ հարուստ ու ազգային է եղել մշտապես:

Ի՞նչ են դրել ամանորյա սեղանին մեր նախնիները, ի՞նչ խորհուրդ է ունեցել յուրաքանչյուր ուտեստ, և ինչպե՞ս են դրանք պատրաստվել: Այս ամենի մասին «Արարատյան արժեքների կրթական հիմնադրամ»-ի գրասենյակում հյուրընկալված մշակույթի գործիչ, բանասեր, զբոսավար Կարինե Փանոսյանը մանրամասնեց ներկաներին: Նրա բանախոսությունը մի նպատակ էր հետապնդում՝ վերադարձ ազգային տոներին:

Հիմնադրամի խորհրդի նախագահ Նաիրի Հոխիկյանը, ներկայացնելով Կարինե Փանոսյանին, շեշտեց, որ նա ոչ միայն «Արարատյան արժեքների կրթական հիմնադրամ»-ի լավագույն բարեկամներից է, այլև այդ հիմնադրամի կրթական ու մշակութային բաժնի ակտիվ անդամներից:

Հիմնադրամը ոչ պաշտոնապես ստեղծվել է 2012 թվականին, իսկ պաշտոնապես հիմնադրվել է 2021 թվականին: Մշակել է ազգային գաղափարախոսական ծրագիր և իրականացնում է այն տարբեր ուղղություններով: Նրա գաղափարակիցների ակումբը շարունակաբար լրացվում է նոր անդամներով, որոնք տարբեր մասնագիտության տեր մարդիկ են: Վերջերս իրականացրած ծրագիրը հայրենաճանաչողական գաղափարախոսական տետրերի ստեղծումն էր, ինչը մեծ սիրով ու հետաքրքրությամբ ընդունվեց ժողովրդի կողմից: Այժմ ընթացքի մեջ է հիմնադրամի ազգային ուսումնական կենտրոնների համակարգող Աննա Գրիգորյանի հեղինակային գիրքը՝ «Արեգի արկածները Արցախում» (ըստ շրջանների), «Արեգի արկածները Հայաստանում» (ըստ մարզերի), որն ամբողջությամբ ձեռակերտ է և հետապնդում է հայրենաճանաչողական նպատակ: Այդ գրքերը խաղերի միջոցով երեխաներին կծանոթացնեն Արցախի բոլոր շրջանների և Հայաստանի բոլոր մարզերի պատմամշակութային արժեքների պատմությանը ու միշտ վառ կպահեն նրանց մասին հիշողությունները:

Բանախոս Կարինե Փանոսյանը, կարևորելով այն փաստը, որ ինչքան լավ ենք իմանում ու պահպանում մեր տոնածիսական ավանդույթները, այնքան ամուր ենք կանգնում մեր հողին (երկիրը մշակույթից է սկսվում), անդրադարձավ ամանորյա ծեսերին: Նախ՝ ինչու՞ ենք Ամանորը նշում հունվարի 1-ին: Ըստ Հուլյան օրացույցի (Հուլիոս Կեսարի պատվին)՝ Հռոմում քաղաքական տարին սկսվում էր հունվարի 1-ին մ.թ.ա. 46 թվականից: Տարբեր ժամանակաշրջաններում այն վերամշակելուց հետո քրիստոնեական աշխարհում ստեղծվեց Գրիգորյան օրացույցը, որի համաձայն՝ Նոր տարին սկսում էին հունվարի 1-ին: Հայ իրականության մեջ ընդունված է եղել գարնանային ամանորը (գիշերահավասարի օրը՝ մարտի 22-ին), աշնանային Նավասարդը՝ բերքահավաքից հետո…

Այսօր ունենք համաշխարհային մասշտաբով միասնական Ամանոր, որ տոնվում է հունվարի 1-ին:

1700-ական թվականներին է Պետրոս Առաջինը ռուսական մշակույթում հաստատել հունվարի 1-ը՝ որպես Նոր տարվա սկիզբ: Այդպես շարունակվեց մինչև խորհրդային բարքերի հաստատումը:

1920 թվականին, երբ Հայաստանը դարձավ խորհրդային պետության անդամ, պաշտոնապես Նոր տարին սկսվեց տոնվել հունվարի 1-ին:

Ամանորին հատուկ է մաքրվելը ու շրջապատի մաքրումը տոներից առաջ: Այդպես էր նաև հեթանոսության ժամանակ: Կարծես թե ծեսը թափառելով հասել է մինչև մեր օրեր: Դա գոյություն ուներ հնագույն ժողովուրդների մոտ հազարամյակներ առաջ և պահպանվել է մինչև այժմ, երբ մաքրում էին շրջապատը, հին իրերը դեն նետում և այլն…:

Բազմաթիվ ծեսեր բնորոշ են եղել Հայկական լեռնաշխարհի տարբեր տարածքների: Սկսենք Կենաց ծառից, որը նույն Կաղանդի ծառն է: Եթե ուսումնասիրենք տարբեր ազգերի մշակույթները, ապա կտեսնենք, որ շատերն են ունեցել իրենց Կենաց ծառը: Կենաց ծառը զարդարվել է Նոր տարում: Այն զարդարում էին տարբեր պտուղներով, որ տարին բերքառատ լինի և հաջողություններ բերի: Դրանք հիմնականում քաղցր պտուղների չրեր են, հատիկեղեն, ճյուղերը պատում են կանաչ-կարմիր թելերով, կախում են քաղցրաբլիթներ, ընկուզեղեն, նաև մաղթանքներ, տիկնիկներ, հետո լուսավորում այն ոչ թե առաջվա նման մոմի լույսերով, այլ ժամանակակից լույսերով, որ ավելի անվտանգ են: Պիտի ասել, որ Կաղանդի կամ Կենաց ծառը չի խանգարում, որ կողքին զարդարված լինի նաև տոնածառը:

Հնագույն շրջանում քաղցրաբլիթներով գուշակություններ էին անում, սակայն քրիստոնեական աշխարհին հատուկ չեն գուշակությունները: Ծառը զարդարում էին նաև խաչբուռներով, սերմերով, օրինակ՝ լոբի, որ նույնանում է սաղմի հետ: Կաղանդի ծառը իր շուրջը ստեղծում է բնության հետ ամբողջական կապ, իսկ երբ երեխաները օգտվում են այդ քաղցր պտուղներից, ապա դա շատ օգտակար է նրանց: Որոշ գավառներում ավանդույթ է եղել, երբ Կենաց ծառը տարել են եկեղեցի, որպեսզի հոգևոր հայրը օրհնի այն: Ամբողջ տարին պահել են այն և հաջորդ տարում վառել են, որ նախորդ տարվա չարը խափանվի: Կենաց ծառը շատ կենսունակ ծառ է և հաղորդակցվում է կարծես մարդկանց հետ: Եղևնին ավելի շատ դեկորի տպավորություն է թողնում:

Կաղանդի ծառ կարելի է ընտրել ցանկացած ծառի ճյուղ: Նախկինում ընտրում էին միայն ձիթենու ճյուղը: Մշակույթը կարծր չէ. այն ներդաշնակ է դառնում իր ժամանակաշրջանին:

Բանախոսն այնուհետև անցավ ազգային-ավանդական խոհանոցին, որ բնորոշ է Ամանորին: Ամանորի խոհանոցը շատ խորհրդանշական է: Պիտի նշել, որ Ամանորի սեղանը նախկինում եղել է պահքային (Սուրբ ծննդին նախորդող մեկ շաբաթը Պահքի շրջան է). միս չէին դնում սեղանին: Խորհրդային շրջանում է ներմուծվել խոզի բուդը, բլինչիկը… Մեր ազգային Ամանորը ավելի շատ պահքային էր, և սեղանը լցված էր լինում պահքային կերակրատեսակներով: Այն սկսվել է հացաթխմամբ, որ սեղանին թարմ լավաշ ու հաց լինի: Գլխավորը Տարեհացն էր՝ չրերով, ընկույզով, չամիչով զարդարված, չորս մասի բաժանումով, որ տարվա եղանակներն էին խորհրդանշում: Նրա մեջ դնում էին լոբի կամ մետաղադրամ, և կիսվում էր ընտանիքի անդամների քանակին համապատասխան: Ում հասնում էր մետաղադրամը, նա ընտանիքի հաջողակն էր: Այնուհետև սեղանին դրվում էին պասուց տոլմա, աղանձ, գաթա, փախլավա, փոխինձ, առատ էր լինում մանավանդ քաղցրավենիքը, որ Նոր տարին քաղցր լինի: Դնում էին նաև մեղր ու չկոտրած ընկույզ, որը պիտի կոտրվեր Սուրբ ծննդին: Մուսալեռում ընդունված էր նաև իշլի քյուֆթան:

Նոր տարվա շեմին հաշտեցնում էին խռով բարեկամներին, ընկերներին, հարևաններին: Սեղանի պարտադիր բաղադրիչն էր նաև հատիկեղենը՝ ընդեղենը, աղցանները, որոնք պետք է ունենային յոթ տեսակներ (յոթը խորհրդանշական թիվ էր): Ղափաման ևս կարող էին դնել սեղանին: Ավանդույթի համաձայն՝ երեխաները տոպրակներով շրջում էին տնետուն, իրենց պարկը կախում երդիկից, որ լցնում էին տարբեր քաղցրավենիքներով, հետո հավաքվում էին, սեղան բացում ու վայելու իրենց «ավարը»:

Նախկինում տանտիրուհիները թեյնիկը դնում էին վառարանին ու անընդհատ եռացնում՝ դրանով խափանելով չարը: Եվ Ամանորի ամենագլխավորը՝ ընտանիքի, գերդաստանի գլխավորի (տատիկ, պապիկ) տանն էին հավաքվում բոլոր հարազատները, առնում նրանց օրհնանքը: Այնուհետև այցելում էին հարևաններին, բարեկամներին՝ նրանց բաժին հանելով իրենց ունեցածից: Այցելում էին նաև նրանց տուն, ում ընտանիքում նոր մահացած մարդ էր լինում:

Պատասխանելով ներկաներին հետաքրքրող հարցերին՝ Կարինե Փանոսյանը հորդորեց բոլորին. «Ողորմությունն էլ սիրով արեք…», իսկ հիմնադրամի խորհրդի նախագահ Նաիրի Հոխիկյանը կոչ արեց. «Աշխարհին զուգահեռ քայլելով՝ միշտ ամուր պահեցեք մեր ավանդականը»: Նա նշեց, որ «Արարատյան արժեքների կրթական հիմնադրամ»-ը համահայկական կառույց է, նրանում որևէ կուսակցություն չկա ներգրավված, որևէ քաղաքական կառույցից ֆինանսավորում չկա, և բիզնես շահ չունի: Տարբեր մարզերում ստեղծվում են հիմնադրամի ներկայացուցչություններ: Առաջիկայում ներկայացուցչություն կստեղծվի նաև Իրանի Սպահան քաղաքում՝ իրանահայ համայնքում: 2026-ին գոյություն ունեցող 77 կրթական կենտրոնների թիվը նախատեսվում է հասցնել մինչև 250-ի:

Միջոցառման ավարտին հիմնադրամի տնօրեն Աննա Չիլինգարյանը ներկաներին հյուրասիրեց ազգային խոհանոցից փոխինձ, որը սիրով համտեսեցին բոլորը:

Շնորհակալություն հայտնելով հիմնադրամի անդամներին այդ հետաքրքիր քննարկման համար՝ ունկնդիրներից մեկը արտասանեց Կարինե Գևորգյանի «Ես իմ դարն եմ ուզում» բանաստեղծությունից մի հատված.

… Ես իմ դարն եմ ուզում,
իմ մանկության դարը,
իմ մաքրության դարը,
անմեղության դարը…

Սուրայա ՂԱԶԱՐՅԱՆ

ԼԵՎՈՆ ԽԵՉՈՅԱՆ-70

ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԼԵՎՈՆ ԽԵՉՈՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ

Հայ գեղարվեստական պատմագրության մի առանձնահատկությունը, թերևս, պատմական անցքերի նկատմամբ հեղինակների զգայական մոտեցումն է: Նախախորհրդային, նաև խորհրդային ժամանակաշրջաններում գրված հայ պատմավեպերն ընդգծվում են իրենց ուսուցողական բնույթով, մինչդեռ պատմագրության իրական առաքելությունը համադրության դաշտ ստեղծելն է՝ ներկայի ու անցյալի տարբերությունները ճիշտ գնահատելու նպատակամղումով:

Առհասարակ, գեղարվեստական պատմագրությունը չի հենվում սոսկ փաստերի գիտական ուսումնասիրությունների վրա, պատմական աղբյուրները յուրաքանչյուր հեղինակի համար ծառայում են ոչ միայն իբրև նախանյութ, այլև կողմնորոշիչ դեր են խաղում նյութի գեղարվեստականացման համար: Այդ է պատճառը, որ հայ գրականության մեջ պատմավեպերի ազդեցությունները ունեն, այսպես կոչված, հասարակարգային արժեք: «Ճիշտ է, գրողը պատմության իմացությունը քաղում է մատենագրական վավերագրություններից, սակայն երբեք չի կարող լինել փաստի ստրուկը»- հուշում է ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը՝ հղում անելով Ռաֆֆու՝ փաստական ճշմարտությունը ոչնչացնելու գրողի իրավունքի տեսությանը:

Պատմագրության ներկայիս ընկալումը ենթադրում է պատմական անցքերի ու իրադարձությունների ոչ միայն սոսկական արձանագրում, այլև դրանց միֆականացում: Առասպելացումը բնավ իրականությունը չի հեռացնում ապրված ժամանակից, այլ ընդարձակում է ճանաչողության սահմանները: Հակվածությունը դեպի միֆը նկատելի է ինչպես գրականության մեջ, այնպես էլ մշակութային այլ բնագավառներում, մասնավորապես կինեմատոգրաֆիայում: Անցյալի ու ապագայի միֆական ազդեցությունը կենդանի վիճակ է՝ բազմանյարդ շոշափուկներով և ըստ էության փոխհատուցում է այն ավանդույթներն ու սովորույթները, որոնք քաղաքակրթական անսիմետրիկ թռիչքի ընթացքում անտեսվել կամ պարզապես թողնվել են ժամանակի լուսանցքներում: Անցյալն ու ապագան առասպելական արտացոլանքի մեջ երևակելու մղումը ինքնապահպանության բնազդի դրսևորում է, որն արդյունք է ինչպես սոցիալ-տնտեսական ցնցումների, այնպես էլ բարոյական դեգրադացիաների:

Գրականության մեջ միֆի ընկալման տարբերությունները բացատրվում են ոչ թե առկա տարրերի ներհակությամբ, այլ դրանց բացակայությամբ: Ո՞րն է առասպելականության հիմնական բանաձևումը: Համընդունելի բանաձև թերևս չկա, կան տարբեր տեսակետներ այդ առթիվ:

Արձակում միֆական մտածողությունը գերազանցապես պատմահայեցողական հենք ունի՝ հորիզոնների ավելի ընդգրկուն տարածքով ու բառաոճային յուրահատկություններով, համակցված հեթանոսական ու քրիստոնեական արժեքների բաղադրատարրերով և առանց վնասելու այդ երկու արժեքների պատմաքաղաքական հիմքերը: Քսաներորդ դարում հայ գրականության միֆականացման ընթացքի վրա շոշափելի ազդեցություն է ունեցել խորհրդային գաղափարաբանությունը, որը փոխանակ հենվելու պատմական ստույգ չափումների վրա, ընդհակառակը, կնիքավորել է «սոցիալիստական նվաճումները»՝ դրանք դարձնելով գեղարվեստական նյութի պատվիրված հումք:

Առասպելի մոդեռնացումը չի ստեղծում, սակայն, նոր ժամանակ, այլ ձևավորում է տվյալ ժամանակի նոր ըմբռնում: Միֆի այսպիսի վերակերպումը հնարավորություն է տալիս հասնելու պրագմատիկ ճշմարտության: Հատկապես էթնիկական լարվածությունների ահագնացման ֆոնին՝ դրա նշանակությունը դժվար է գերագնահատել, իսկ 20-րդ դարավերջը նաև դրանով է ընդգծվում: Դարաշրջանների հերթագայման սահմանագծին, բնականաբար, միֆի նկատմամբ հետաքրքրությունն ավելի է մեծանում:

Լևոն Խեչոյանի մոտ պատմության ընկալումը զուտ 20-րդ դարավերջի դիտվածք ունի, բնականաբար, այդ ժամանակաշրջանի սոցիալական ու քաղաքական միջավայրին բնորոշ առանձնահատկություններով: «Արշակ արքա, Դրաստամատ ներքինի»-ի մտահղացումը ծնվել է 1988-ին, երբ սկիզբ էր առել Ղարաբաղյան շարժումը: Չորրորդ դարի իրողությունների հետ ուղղակի աղերսներ չունեցող 88-ը պետք է ունենար պատմական ի՛ր նպատակը: Դա հայկական անկախ զուգապետության դոկտրինն էր, որ դրվեց ավելի ուշ՝ արդեն կոնկրետ հանգամանքներում: Խեչոյանը գտնվելով այդ ահեղ օրերի քուրայում՝ զգում էր նոր առասպելի ծննդի անհրաժեշտությունը: Գրողական հեռազգացողությամբ կանխատեսում էր հետագա իրադարձությունները, կարելի է ասել, նույն այն բեմագրային տիրույթում, որպիսին պատմությունը կանխորոշել էր Շարժման ընթացքը: Խորհրդային կայսրության փլուզումն անխուսափելի էր, ու ծառանում էր երկրի հետագա ճակատագրի հարցը՝ ի՞նչ է լինելու հետո: «Հետոն» բացահայտողն անխուսափելի պատերազմը եղավ, և Լևոն Խեչոյանը, կամավորագրվելով այդ պատերազմին, գնաց իրական պատմության դաշտում հայտնաբերելու նոր առասպելը: Հենց պատերազմի դաշտում, մարտադաշտի օրերին գրվեց «Արշակ արքա, Դրաստամատ ներքինի»-ն, և առաջին ընթերցող-ունկնդիրներն էլ նրա մարտական ընկերներն էին: Համաշխարհային գրականության պատմության մեջ երևի քիչ նախադեպեր կան, երբ գրքի ձեռագիր էջերն այդքան վառոդահոտ են: Խեչոյանի հիշյալ վեպի բոլոր էջերն էլ պահպանում են վառոդահոտը՝ հիշեցնելով անցյալն ու ապագան իրար կապող նորաբարբառ ասքի բազմադարյա խորհուրդը:

Ղարաբաղյան պատերազմի ընթացքում և հետպատերազմյա, այսպես կոչված, անցումային շրջանում Խեչոյանը երկու վեպ է գրել՝ «Արշակ արքա, Դրաստամատ ներքինի»-ն և «Սև գիրք, ծանր բզեզ»-ը: Հատկանշական է, որ առաջին վեպը նվիրված է հայ ժողովրդի պատմական անցյալին և լույս է տեսել Արցախյան պատերազմի ավարտից մեկ տարի հետո: Իր պատմավեպը հեղինակելով՝ Խեչոյանը նախ փշրել է պատմական առասպելի ընկալման դասական կաղապարները, և երկրորդ՝ վիպագրման նոր ոճ է մտցրել հայ գրականության մեջ:

Թե՛ նախախորհրդային կղերական և թե՛ խորհրդային համայնավարական գաղափարաբանությունը հայ պատմագրության մեջ սահմանափակել են թագավորի անվերապահ իշխանակրության իրավունքը: Այդ պատճառով էլ գրավոր հին վավերագրերը, որոնց հիման վրա ստեղծվել են գեղարվեստական գործեր, լիքն էին թագավորների՝ արքայական թուլությունները մատնանշող փաստերով: Արքայաձեռն կատարված մեծագործությունները կարծեք մնացել են պատմության լուսանցքներում, ինչպես, ասենք, Արշակ արքայի դեպքում է, և Խեչոյանը փորձել է դրանք վերաարժևորել:

Ուշագրավ է Դրաստամատին ներքինացնելու նկարագրությունը: Ըստ էության, վեպի հեղինակը շատ չէ սևեռված այն մտքին, թե ամորձատվածությունը փոխակերպում է անձի վարքը: Ներքինին հավատարմության խորհրդանիշ է, քանզի տաճարի սպասավորները հեթանոսական սովորույթով կրակի վրա այրել են վերջինիս ամորձիները և արյունաշաղախ ալյուրի մոխիրը ջրի հետ լուծելով՝ լցրել են բակի սուրբ սոսիների արմատների վրա: Դրանով գուշակվել է Դրաստամատի՝ թագավորին նվիրվածության աստիճանը: Բայց նա սովորական ներքինի չէ, Գարջույլ իշխանի սիրելի առաջնեկ որդու զոհաբերումը թագավորին՝ ամենամեծ նվիրումն է: Երևակ մոլորակն իր չեզոք դիրքով անմիջապես ընդունում է եկվորին, իսկ Արձան քուրմը քրիստոնեական ուսմունքով կրթում է նրան: Դրաստամատն այլևս արդեն դառնում է Արշակ արքայի ու հայոց գահի պատվի փրկության պարտադրյալը: Նա խոշոր գումարներ վճարելով՝ ազատում է Փառանձեմ թագուհու հրապարակային պղծումը կանխող Փարուխին և ամենակարևորը՝ Արշակ թագավորին «պատվում» է արքայավայել մահով: Խեչոյանը քաղաքական իմաստ է տալիս ներքինիի գործողություններին և ինչ-որ տեղ նույնիսկ հակադրվում պատմական կարծրատիպին: Նրա կերտած Դրաստամատը հրաշալի գիտի ու զգում է արժեհամակարգի կործանումը, գիտակցում է, որ միայն դրա վերականգնմամբ է հնարավոր կանխել երկրի ուծացման աղետը:

Գրողի մտածողական համակարգը այն հարթակն է, որի վրա կառուցվում է ասելիքի գաղափարական իմաստը: Գաղափարի փնտրումը նյութի մեջ՝ կամայական մոտեցում չէ, այն պետք է բխի որոշակի նպատակադրությունից: «Առհասարակ վեպում մեծ տեղ են զբաղեցնում առասպելներն ու զանազան պատմությունները: Պատմավեպերով հարուստ հայ գրականության մեջ չկա մեկ ուրիշ գործ, որը դիցաշխարհային մտածողության առումով գերազանցի այս վեպը: Խեչոյանը հաճախ դրանցով ընդմիջում է դեպքերի զարգացումը և դրանք պատմում այնպիսի բնական երանգով, ասես ամեն ինչ հենց այդպես էլ եղել է: Դա, իհարկե, բնորոշ է 20-րդ դարում արևմտյան և հատկապես լատինաամերիկյան գրականությանը, որը լուրջ նվաճումների է հասել միֆաստեղծ գրականության ասպարեզում»- գրում է գրականագետ Անահիտ Ալեքսանյանը: Ընդունելի է Ա. Ալեքսանյանի այն դիտարկումը, ըստ որի Լևոն Խեչոյանը քանդել է պատմական վեպի մասին ընդունված օրենքները, դրանք կառուցել նորովի ու յուրովի: Այսինքն՝ ընթերցողին թվում է, թե խոսքն իրեն արդեն ծանոթ պատմության մասին է, բայց պարզվում է՝ փոփոխված են սյուժեն ու ներքին իմաստը:

Համոզմունքի տրամադրական ֆոնը հուշում է, որ հայ իրականության մեջ միֆը «հավաստիության համաձայնության» կրիչ ունի, որովհետև ամեն մի սերունդ իր կենսագրության որոշակի հատվածում դաստիարակվում է առասպելներով: Այս համատեքստում միանգամայն տեղին է գրականագետ Ժենյա Քալանթարյանի այն դիտարկումը, թե՝ գրականության մեջ զուգահեռաբար ապրում են քրիստոնեական ու հեթանոսական միֆերը: «Հին միֆերի վերաստեղծման կամ վերամարմնավորման միջոցով գրողները փաստորեն կապ են հաստատում ժամանակների միջև, ցույց տալիս ժամանակակից հերոսների պատմական ու նախապատմական ակունքները»,- գտնում է Ժ. Քալանթարյանը: Բայց միֆասիրությունը չի կարող հասցնել իդեալի (ինչպիսին որ ֆրանսիացի փիլիսոփա Ժորժ Սորելն էր պատկերացնում). տրորված, քանիցս իրարամերժ գնահատված պատմական առասպելները, հատկապես եթե դրանք ունակ չեն պատասխանելու ներկայի հարցականներին, չեն կարող իդեալ դառնալ: Արշակ արքան, Պապ թագավորը և անգամ Գևորգ Մարզպետունին հնացած են նորօրյա գաղափարական ըմբռնումների տեսանկյունից, քանի որ նրանց պատմական ժամանակը վաղուց սպառվել է: Մինչդեռ հայ ժողովրդի նոր պատմությունը, մանավանդ ղարաբաղյան գոյապայքարի ժամանակաշրջանն ընդգրկող, առասպելացման կարիք կարծես թե ունի: Իրականի ու միֆի նույնականացմամբ ստեղծված «պարտադրված» միֆը չի կարող գենետիկ հիշողություն ունենալ: Այս հենքով կառուցված կոմունիզմի առասպելն, օրինակ, շատ արագ փլուզվեց, քանզի զուրկ լինելով փիլիսոփայական արմատից՝ միֆը վերածվել էր գաղափարական գովազդի:

Լևոն Խեչոյանը միֆական երանգների մեջ է արտացոլել նաև Ղարաբաղյան պատերազմը, բնականաբար, 20-րդ դարավերջի ազգաքաղաքական խնդրառություններով: Պատմական այդ շրջանը կարելի է հայ ժողովրդի ամբողջական պատմության կտրվածքով համարել ինքնագտնման փուլ, որովհետև մեր պատմությունն առաջին անգամ արձանագրեց համազգային միասնության փաստը: Այսինքն այն, ինչ մեր պատմաբանները դարեր շարունակ ազգային անհիրականանալի երազանք են համարել: Եթե մի կողմ դնենք հայրենասիրական պաթոսը, որն ընդամենը քարոզչության տարր է, կտեսնենք, որ Ղարաբաղյան պատերազմը միաժամանակ բացահայտել է մեր ազգասիրական ներհակությունները, որոնք գոյություն են ունեցել միջին դարերում և աննշան փոխածևումներով հասել մինչեւ մեր օրերը: Քաղաքական պատասխանատուներին հաճո չէ, իհարկե, այս մասին բարձրաձայնելը, սակայն գրողը պարտավոր էր դա ասել, ապրված իրականությունից պեղել ազգային նոր միֆը, որի կանխագաղափարը նյութականացել է հենց պատմության վերաիմաստավորումից:

Խեչոյանը փաստացի առանձնացրել է պատերազմի բարոյականությունն ընդհանուր հասկացություններից, ստեղծել է պատկերներ, որոնք թվացյալ զուրկ են արտաքին ֆիզիկական կառուցվածքից: Խորհրդանիշերին դիմելը սովորաբար շաղկապվում է խեղաթյուրված իրականությունն «իրացնելու» նպատակի հետ, Խեչոյանը, սակայն, այդ խորհրդանիշերը ծառայեցրել է իբրև գեղագիտական հիմնավորումներ:

Ակներև է, որ հետխորհրդային սկզբնափուլը «գաղափարաբանական» շրջան էր, հասարակական-քաղաքական շարժընթացները սևեռված էին հիմնականում ազգային խնդիրների վրա: Դրանց հիմքով ստեղծվող միֆը, եթե արտահայտում է ազգապետական շահը, ձեռք է բերում էպոսային արժեք: Այս իմաստով, Լևոն Խեչոյանի «Սև գիրքը» և վեպն ուղեկցող մյուս պատերազմաթեմա ստեղծագործությունները նման հավակնություններ չունեցան, մանավանդ որ գրականագիտական ամենատարբեր գնահատումներով՝ այդ ստեղծագործությունները դասակարգվում են հայ նորագույն գրականության լավագույն արարումների շարքում:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Բան. գիտ. թեկնածու

ԻՐԱԿԱՆ ՀԵՔԻԱԹ

Լևոն ԽԵՉՈՅԱՆ

ՏԱՆ ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿԸ

Ժամանակով շատ հարուստ մի մարդ է լինում: Այնքան հարուստ, որ քաղաքի իշխաններն ու ազատանին երազում էին նրա հետ սեղան նստել: Կարմրագմբեթ, տաք ջրերի բաղնեպանն ու արքունական պահեստների մառանապետն ախ էին քաշում, որ երբ նա սպիտակ ջորիները լծած կառքով անցներ փողոցով, գոնե գլխի շարժումով իրենց բարևեր:

Մեծահարուստը բազմանդամ ընտանիք՝ եղբայրներ և որդիներ ուներ, որոնք այլևս եկեղեցի չէին հաճախում: Ավագ տղան վաճառական էր, շրջում էր օտար երկրներ, կյանքն անցկացնում էր շվայտության և ցոփության մեջ: Մի օր ընտանիք վերադարձավ բորոտված, հիվանդ:

Միջնեկ տղան շուկայում հարկահավաք էր, կուտակած հարստությունը վատնում էր՝ անառակ կանանց հետ գիշերներ լուսացնելով:

Իր մեծ եղբայրը արքունական քարհանքերի կառավարիչն էր ու արհամարանքով էր վերաբերվում աղքատներին և մուրացկաններին:

Նրա տղաները, եղբայրները, հարսները սկսեցին տանն անընդհատ աղմկել ու վիճել, իրար չլսել: Աղքատությունը հաղթեց, ցիրուցան եղան, ամեն մեկը մի տեղ ծառա դարձավ: Մեծահարուստն էլ ամոթից գլուխը վերցրեց, գնաց օտար տեղեր՝ աշխատանք գտնելու:

Մի գյուղում նրան վարձեցին որպես ջրաղացպան, բայց ջրաղացքարերը հակառակ պտտվեցին: Տիրոջը լուր տարան, եկավ, ասաց. «Իմ ջրաղացները մինչև հիմա ճիշտ էին աշխատում, դու եկար, փչացրիր»: Նրան վռնդեց, քարերը սկսեցին իրենց շիտակ պտույտը տալ:

Աղքատն այդտեղից գնաց հարևան գյուղը, այգեպան դարձավ. եկավ պտղի ժամանակը, ամբողջությամբ բերքը թափվեց, ոտնատակ գնաց: Այգու տերը եկավ, ասաց. «Դու էս ի՞նչ մարդ ես, ոտդ կոտրվեր, չգայիր, տունս քանդեցիր»: Առանց վարձ տալու դուրս արեց:

Աշունն էլ եկավ, արդեն պաղ քամիներ էին փչում, ծառերից տերևներ թռցնում: Ուր գնում էր, նրան չէին վարձում: Գիտեին ջրաղացքարերի թարս պտտվելը, պտղի ոտնատակ գնալը: Գործատերերը խուսափում էին նրանից:

Շատ քաղաքներ ու ավաններ շրջեց. աշնան պաղն արդեն ջրափոսեր էր սառցապատում: Մի գյուղում՝ դռան առաջ, քարին նստած ծերունու տեսավ, ընկավ ոտքերը, ասաց. «Հայրի՛կ, այս ծմեռ փորհացի վերցրու ինձ, պաղ անձրևներն ու ցրտերն արդեն սկսվել են, այլևս չեմ կարող օտար երկրներ գնալ»: Ծերունին ընդունեց նրան, ասաց. «Իմ տավարը խնամիր, պահիր մինչև Զատիկ, քեզ դրամ էլ կտամ, դու մեղք ես, տեսնում եմ շատ մեղք, հալածված ես»:

Երեք ամիս այդ տան տավարն էր պահում, ծերունին գոհ էր: Մտան Մեծ պասը: Հալևորը մի գայլխեղդ, լավ քած ուներ՝ պիտի ցնկներ: Նրան ասաց. «Գիշերը հանկարծ չքնես, նայիր շանը՝ ցնկնելու ժամանակ լակոտները չխեղդվեն»:

Չափազանց զգույշ էր, բայց լարվածությունից հանկարծ քունը տարավ, արթնացավ, տեսավ քածը ցնկնել է, մի ծերունի էլ կողքին, նոր ծնված լակոտին շան պտուկներին է դրել, կերակրում է: Սարսափած մտածում է, թե էս հալևորն իր տանտերն է, քնով ընկնելու համար իրեն դուրս կանի: Մոտեցավ՝ տանտերը չէր: Հարցրեց նրա ով լինելը:

Ասաց. «Դժվար է ինձ ճանաչելը, ասեմ էլ, չես ճանաչի: Եթե չգայի, հաստատ իմացիր՝ քածը սատկելու էր, և դու կհայտնվեիր փողոցում: Ասաց.

- Ես այս ընտանիքի տավարը, ունեցվածքը, ամենայն բանը՝ ինչը որ փորձության ենթարկվի, հասնում, փրկում եմ: Ես այս տան պահապան հրեշտակն եմ:

Մարդը միանգամից ծնկի իջավ ծերունու առաջ, արցունքն աչքերին պատմեց իր գլխով անցած պատմությունը: Նրա ձեռքերը համբուրեց, խնդրեց, աղաչեց, ասաց. «Ժամանակին իմ ընտանիքն էլ է ունեցել տան պահապան հրեշտակ: Խռովել, մեզանից գնացել է, եթե գիտես նրա տեղը, ասա, գնամ, բերեմ. գերդաստանս կոտորակվել, ցիրուցան է եղել աշխարհով մեկ, փրկեմ երբեմնի իմ արժանապատվությունը, սփոփվեմ այս տառապանքից»: Ծերունին ասաց. «Այո, գիտեմ նրա տեղը. պիտի գնաս Արագած լեռը, քարանձավներից մեկում կգտնես նրան: Խռոված է ձեզանից և վերադառնում է դարերի խորքը, արդեն նրա վրա մի թիզ փոշի է նստել: Գնա փորձիր, որդի, ծունկ իջիր, մազերդ փետիր, մաքրիր թիզ փոշին, աղաչանք արա: Ինչքան որ ինքը զայրանա, դու խնդրիր: Ինչ էլ տա, հանկարծ չասես՝ քիչ է, վերցրու, վերադարձիր»:

Լույսը բացվեց, տանտերը եկավ գոմը, տեսավ՝ քածը ցնկնել է, շատ ուրախացավ: Գրպանից դրամ հանեց, տվեց աղքատին:

Մարդը հավաքեց իր լաթերը, ծերունուն ասաց. «Հայրի՛կ, քեզանից շնորհակալ եմ, ես պիտի հեռանամ»: Ծերունին խորհուրդ տվեց՝ Զատիկից հետո գնալ, նա չհամաձայնվեց: Խուրջինը հաց դրեց ու ճանապարհվեց դեպի Արագած: Օրեր ու շաբաթներ անցան, հասավ լեռանը: Իջավ ձորերը, քարանձավից քարանձավ անցավ: Արդեն մթնում էր, մտավ մի անձավ ու տեսավ իր տան պահապան հրեշտակին՝ քուրքի մեջ փաթաթված-պառկած, մի թիզ փոշի էլ վրան: Սկսեց մաքրել, նրա անզգույշ շարժումներից հրեշտակն արթնացավ: Բարկացավ, ասաց. «Դե կորիր, լիրբ, հազիվ էի ձեզանից փախել, պրծել, դարձյալ գտար: Հազարավոր տարիներ շարունակ ուղեկցել եմ ձեր տոհմին, սերնդեսերունդ փոխանցվել ու պահապանն եմ եղել ձեր ունեցվածքին, ձեր ընտանիքին, փշուր-փշուր կեցություն եմ ստեղծել եղածների և հաջորդների համար: Ժամանակների մեջ ձերոնցից ով անապատ, ծով է կտրել, նրանց հետ եմ եղել, ով սուր է բռնել ու սրից ընկել, նրանց հետ մեռել ու հառնել եմ: Ես դարերով ընտանիք եմ առաջնորդել ու շինել, որ ձեզանով հայրենիք ստեղծվի, ամուր երկրի հիմք լինեք: Իսկ դուք, գոնե մի անգամ, հարցրեցի՞ք ձեզ, թե ով եք դուք, որ ավերում եք, իրավունք ունե՞ք դարերի խորքից ճանապարհ բռնած ընտանիքը քանդելու: Ընտանիքը հայրենիք է: Դուք, ի՞նչ է, միայն ձեզանո՞վ եք, որ դուք էլ քանդում եք: Պղծում եք, անառակ եք, աղքատին արհամարհում եք, անհավատ եք, հեշտասեր, ցոփության մունետիկներ եք: Ձեզանից հրաժարվում և վերադառնում եմ ժամանակի խորքը՝ որտեղից եկել եմ: Ահա, ինձ վրա իջած փոշին կխտանա, նրա հետ ես էլ քար կդառնամ ու կվերադառնամ սկիզբը՝ մեկ ուրիշ ընտանիք բերելու»:

Ասաց. «Պապի, վերևն Աստված, ներքևը՝ դու, չեմ թողնի, իմ նախնիների սիրուն պիտի գաս, գնանք, արդեն վերջը հասել է: Խոստանում եմ, որ չենք վիճի, չենք հայհոյի, չենք աղմկի, մեր տոհմի ու ընտանիքի արժանապատվությունը կպահենք: Խղճա մեզ, կոտորվում ենք»: Ծերունին ասաց. «Լավ, որ խոստանում ես, առ էս երկու ընկույզը, դու գնա, ես կգամ»:

Նա վերցրեց ընկույզները, ուրախացած վերադարձի ճամփան բռնեց: Դարձյալ օրեր ու շաբաթներ անցան և, երբ անցնում էր մի գյուղի մոտով, տեսավ երկու տղեկներ՝ գետից մի կարմիր քար են հանել, ամեն մեկն ուզում է ինքը վերցնի, չեն համաձայնվում, վիճում և կռվում են: Երեխաներին մոտ կանչեց, քարի դիմաց՝ ամեն մեկին մի ընկույզ տվեց, տղաները հանդարտվեցին, ուրախացած գնացին: Ինքն էլ քարը գրպանը դրեց, շարունակեց ճամփան:

Եկավ, տուն հասավ, տեսավ՝ մեծ ու փոքր մթան մեջ են նստել, անգամ ճրագ չունեն: Քարը հանեց, դրեց լուսամուտի գոգին, ճրագի պես լույս տվեց, զվարթությամբ լցվեց տունը: Մարդ ուղարկեց քաղաքի չորս դին՝ անկյալանոցներից, գողենոցներից, եկեղեցու բակի և շուկայի հրապարակի մուրացկանության տեղերից, կավատ ու աստղագուշակ դարձած եղբայրներին, տղաներին, հարսներին՝ բոկոտն ու հագնված, մաքուր ու անլվա, կուշտ ու քաղցածին կանչեն: Գերդաստանով նստեցին լույս տվող կարմիր քարի առաջ, ու ինքը պատմեց իր և տան պահապան հրեշտակի մասին, թե ինչ հանդիմանություններ ու պատվիրաններ է ստացել:

Քանի որ հավաքվածներն այդքան տարիներ թափառականներ, մուրացիկներ ու մերժվածներ էին եղել, ամեն մի խրատ միանգամից էին հասկանում և ընդունում:

Ասացին. «Տոհմի ավագը դու ես, ինչ էլ ասես, կհնազանդվենք, առաջնորդիր մեզ»:

Այդ նույն գիշերը քաղաքի մոտով մի վաճառական էր անցնում, մթան հետ արդեն փակվել էին քաղաքի դարպասները, որոշեց մինչև առավոտ բաց դաշտում սպասել: Քարավանապետերը ուղտերին պառկեցրին, ծառաները վրաններ խփեցին: Արևելքի դեմ երեկոյան աղոթքն արեցին, հացը կերան: Վաճառականը ճանապարհի հոգնությունը թոթափելու համար լիալուսին գիշերին խոտերի մեջ էր շրջում, հեռվից քաղաքի կրակներին էր նայում և թախծում: Աստղերի բոցկլտոցն էլ ավելի տխրեցրեց նրան: Տներից մեկի պատուհաններին մի բոց նկատեց, որ բոլորից պայծառ էր: Լույսը բացվեց, ասաց. «Ես պիտի գնամ էս տունը, տեսնեմ՝ այդ ի՞նչ լույս էր»: Օգնականները, աներորդին, ծառաները խորհուրդ տվեցին չգնալ, օտար քաղաք է, օտար մարդիկ են: Չլսեց: Գնաց, տեսավ՝ մի աղքատ, դատարկ տուն է, ոչինչ չկա, չորս պատերն են, ու մի կարմիր քար պատուհանի գոգին լույս է տալիս:

Հարցրեց. «Էս քարը չե՞ք ծախի, ես վաճառական եմ, լավ գին կտամ»: Ասացին. «Չէ, ճրագի տեղ ենք բանեցնում»:

Ասաց. «Այնքան կվճարեմ, որ ոչ միայն ճրագ, այլ տուն, կահ-կարասի էլ կառնեք, - ասաց, - հազար կտամ»: Ասացին՝ չէ:

Տանտերերը գինը հազարից հասցրին հինգ հազարի: Քարը տվեցին, դրամը ստացան:

Վաճառականը աշխարհներ տեսած, փորձված ու խորամանկ մարդ էր: Տանտիրոջն ասաց. «Լավ մարդ ես երևում, եկ ես ու դու եղբայրանանք, պայման դնենք՝ ես շուտ մեռա, իմ ունեցվածքը քեզ դու մեռար, քոնը՝ ինձ: Համաձայնում են, եղբայրական ճաշկերույթ են անում: Վաճառականը վերցնում է կարմիր քարն ու գնում:

Էս մարդն էլ հինգ հազար դրամի ապրանք առավ, լցրեց տունտեղը, քիչ-քիչ հասարակության մեջ դիրքը, պատիվը ետ բերեց:

Վաճառականն էլ անապատից անապատ, երկրից երկիր կտրեց, երկու տարի անցավ, լույս տվող քարը վաթսուն հազար դրամով ծախեց: Վերադարձի ճանապարհին մտածեց՝ էն մարդուն հյուր գնա: Այդպես էլ արեց: Ընտանիքի բոլոր անդամներին նվերներ տվեց: Հանդիպման առթիվ բարեկամական ճաշկերույթի սեղան բացեցին:

Վաճառականը թե. «Այ ախպեր, անգամ չհարցրիր՝ քո տված էն քարը քանիսո՞վ եմ ծախել»: Քանի որ նա աշխարհներ տեսած, փորձ ունեցող խորամանկ մարդ էր, մտածում էր՝ եթե ասի վաթսուն հազարով է ծախել, տանտիրոջ սիրտը կպայթի, նրա ունեցվածքը կմնա իրեն: Հենց այդ նպատակով էլ եկել էր:

Տանտերն ասաց. «Այ մարդ Աստծո, ես այդ քարը երկու ընկույզով էի առել»: Վաճառականը երկու ձեռքով գլուխը բռնեց. «Վաթսուն հազարի ապրանքն էլ երկու ընկույզով առնե՞ն», - ասաց, ու սիրտը ճաքեց, մեռավ:

Տանտերն էլ, ինչպես որ պայմանավորվել էին, գնաց քաղաքից դուրս, որտեղ որ վաճառականի վրաններն էին խփված, նրա ունեցվածքը բարձեց ուղտերին, բերեց տուն, էլ ավելի հարստացավ ու բարգավաճեց:

Իսկ նրա ընտանիքը՝ եղբայրները, որդիները, հարսները խոհեմ ու ժուժկալ կյանքով սկսեցին ապրել:

ՀԻՇԵՆՔ ԲՈԼՈՐԻՆ՝ ԱՆՈՒՆ ԱՌ ԱՆՈՒՆ

ԸՆԿԱՆ՝ ՀԱՅ ԶՈՐԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ ՀԻՇԵՑՆԵԼՈՎ

«9 տղերքով մի միտք, մի խոսք էին դառել, մի բռունցք էին դառել, որ զորամասից գալիս էին, հագի հագուստն էլ չէին հանում, ոնց որ դրա մեջ ապրեին իրենք»:

Անդրանիկ Շահնազարյանի եղբոր՝ Արմենի խոսքը

Հայրենի երկրի պաշտպանության ու հայ զինվորի արժեհամակարգի իրական կերպարներ էին Արմավիրի մարզի Տանձուտ գյուղի զավակ Անդրանիկ Մարտիրոսի Շահնազարյանն ու նրա հրամանատարությամբ գործող ջոկատի 8 տղաները՝ Հարություն Գեորգիի Անդրիասյանը (ծնված 16. 01.1990թ. Առատաշենում), Սարգիս Վահրամի Հարությունյանը (ծնված 21. 02. 1994թ. Առատաշենում), Արմեն Գուրգենի Մարտիրոսյանը (ծնված Արգավանդում), Սմբատ Միհրանի Ավետիսյանը (ծնված 15. 08. 1989թ. Արգավանդում), Ռոման Սուրիկի Մարգարյանը (ծնված 1995թ. Մարգարայում), Հարություն Սեյրանի Մկրտչյանը (ծնված 31. 12. 1993թ. Նոր Կեսարիա գյուղում), Գևորգ Սեյրանի Արշակյանը (ծնված 1992թ. Մրգաշատում) և Գարիկ Գրիգորի Բարսեղյանը (ծնված 25. 10. 1983թ. Մրգաշատում):

Արցախյան 44-օրյա կործանարար պատերազմում Անդրանիկն ու իր մարտական ընկերները՝ Արմավիրի մարզի տարբեր բնակավայրերից, անցան ծանր ճանապարհ, կատարեցին բազում սխրանքներ ու տուն եկան: Սակայն շուտով նրանք նորից մարտադաշտում էին՝ պաշտպանում էին Հադրութի շրջանի Հին Թաղեր ու Խծաբերդ գյուղերի սահմանը, Դիզափայտի Կատարո վանքը: 2020թ. դեկտեմբերի 11-ին թշնամին խախտեց հրադադարը ու մեծ ուժերով հարձակում սկսեց Հին Թաղեր եւ Խծաբերդ գյուղերի ուղղությամբ: Այստեղ հսկում էին կամավորական ու պահեստազորային ջոկատներ Շիրակի, Արմավիրի մարզերից, այլ տեղերից: Արմավիրցի տղաները փաստորեն դարձան մահապարտներ՝ ապահովելով մեր ջոկատների նահաջը: Ցավալի է, եղան նաև գերեվարվածներ: Բայց զրահ-վահան դարձան ու հերոսաբար մարտնչեցին Անդրանիկն ու իր տղերքն իրենցից բազմապատիկ ավելի թուրքհատուկ ջոկատայինների դեմ, պատճառեցին մարդկային մեծ կորուստներ, թույլ չտվեցին առաջ անցնել: Մի ամբողջ օր կռվեցին հերոսաբար ու մարտիրոսվեցին: Ցուցաբերած արիության ու խիզախության համար տղաները հետմահու արժանացել են «Արիության համար» մեդալի:

Հերոսների ծնողների, հարազատների պատմելով՝ թշնամին, չնայած ունեցած մեծ կորուստների, որ պատճառել էին Տղերքը, զարմացել էր: Թուրք հրամանատարն ասել էր՝ իրենք կարծում էին մեծ ուժեր են իրենց դիմակայում, պարզվել է՝ ընդամենը 9 հոգի էին:

Արմավիրի մարզի Տանձուտ գյուղից 44-օրյա պատերազմում գյուղից զոհվեցին նաեւ 43-ամյա Կարեն Սամվելի Գրիգորյանը և 28-ամյա կապիտան Աղասի Վրեժի Միքայելյանը, որն ավարտել էր Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանը և ծառայում էր Ջրականում (Ջաբրայիլ)՝ տանկային վաշտի հրամանատար: Գյուղի Սբ. Սահակ եկեղեցու հարեւանությամբ է Մարտիրոս Սահակի Շահնազարյանի տունը, որը կառուցվել է 1903թ. Մարտիրոսի Հակոբ պապի կողմից: Նրանց պապերը եկել էին Բայազետից: Մարտիրոս Շահնազարյանն ամուսնացել է համագյուղացի Սիլվա Մուրադյանի հետ, բնակվել պապի կառուցած տանը, ունեցել են 2 որդի՝ Անդրանիկը և Արմենը: Սիլվայի հայրական պապը՝ Նահապետը, եղել է Անդրանիկ զորավարի զինվորներից: Տնից ոչ հեռու Մեծ Հայրենականում նահատակված տանձուտցիների հուշահամալիրում բացվել է և՛ Արցախյան պատերազմներում, և՛ 44-օրյայում նահատակվածների հուշակոթող: Անդրանիկի ծնողները մշտապես ծաղիկներ են խոնարհում հերոս որդու հուշաքարին: Մարտիրոսի Հակոբ պապին, որպես կուլակի, 1937թ. գնդակահարել են՝ երկհարկանի ու մեծ չափերով տուն ունենալու պատճառով: Մարտիրոսի հորը՝ Սահակին, 1949թ. աքսորել են Սիբիր, Ստալինի մահից հետո է տուն վերադարձել:

Պապերի տխուր պատմությունը, Արևմտյան Հայաստանի կորուստը մշտապես տանջել են Անդրանիկին: Մեծացել է հոր պապի կառուցած տանը, մշակել նրա տնկած խաղողի այգին: Եվ այսօր նույն տան մի անկյունում արդեն հավերժի ճամփորդ, Անմահ հերոսի մասին պատմող լուսանկարներ են, անձնական իրեր, փաստաթղթեր: Ծնողներն անհուն կարոտով են բացում պահարանի փեղկերը, ցույց տալիս սիրելի «Քայլող հանրագիտարան» որդու մասին պատմող իրերը: Ծնվել է 1983թ. հունվարի 25-ին: 1990-2000 թթ. սովորել եւ ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: Երբ այս կրթօջախում զրուցում էի տնօրեն Հովսեփ Այվազյանի հետ, ասաց «10 տարվա ընթացքում սովորել է բացարձակ գերազանց, ակտիվ էր նաև հասարակական աշխատանքներում իր կազմակերպվածությամբ: Դպրոցում էլ էր զգացվում նրա սերը ծնողների հանդեպ, որն էլ փոխանցվում էր առ հայրենիք»: Ընդհանրապես մեծ ցավով պատմեց նահատակված իր սաների մասին, որոնք ընկան Արցախյան վերջին պատերազմում: Անդրանիկը դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի մեխանիկայի ֆակուլտետ: 2004թ. ամուսնացել է Հայկավան գյուղից մասնագիտությամբ կենսաբան Նինա Հովհաննիսյանի հետ: Ունեն 3 զավակ՝ Միլենան (ծնվ.՝ 2004 թ.), Լեւոնը (2009 թ.) եւ Նարեն (2018 թ.): Բուհն ավարտելուց հետո զորակոչվել է Հայոց բանակ՝ ավագի կոչումով, դասակի հրամանատար: 2007թ. զորացրվել է ավագ լեյտենանտի կոչումով: 2008-ին աշխատանքի է անցել «Ֆինքա» ունիվերսալ վարկային կազմակերպության Մյասնիկյանի մասնաճյուղում՝ վարկային մասնագետ: 5 տարի այստեղ աշխատելուց հետո տեղափոխվել է Արմավիրի մասնաճյուղ և աշխատել որպես վիճահարույց հարցերի առաջին կարգի մասնագետ: 2016թ. առաջիններից էր, որ մասնակցեց ապրիլյան պատերազմական գործողություններին: 2020թ. սեպտեմբերի 27-ին արդեն առաջնագծում էր: Հոկտեմբերի կեսերին մի քանի օրով տուն է եկել և շուտով նշանակվել Հուշակերտի զորամասի ջոկի հրամանատար, մեկնել առաջնագիծ. սկզբում՝ Ջրականի տարածք, իսկ նոյեմբերի 26-ին տեղափոխվել են Հին Թաղեր-Խծաբերդ հատված: Այստեղ էլ հերոսաբար մարտիրոսվել է 8 զինակցի հետ: Հուղարկավորված է հայրենի գյուղի գերեզմանատանը: Հաճախ եմ զրուցում Անդրանիկի հոր՝ Մարտիրոսի հետ, որը մշտապես է զգում որդու բացակայությունը, ցավում մնացած հերոսների համար: Ամեն օր գյուղի Սբ. Սահակ եկեղեցում, որը կառուցվել է 1912թ. Տանձուտ գյուղի բնակիչների ջանքերով, մոմ է վառում տղերքի հիշատակի համար, սակայն շատերի նման անհանգիստ է. հողը, որ պաշտպանում էին Տղերքը, որի համար ընկան, գերության մեջ է... Երկու տարուց ավելի է՝ հայազուրկ է ամբողջ Արցախը, թափառական են շատ արցախցիներ: Իսկ Անդրանիկի ու իր տղերքի, նրանց Լուսե բանակի շատ Հերոսների հոգիները երկնքում արդարություն են պահանջում... Դեռ 3 տարի առաջ Անդրանիկի հայրը՝ Մարտիրոսը, իր ֆեսբուքյան էջում գրել է. «Այսօր լրացավ 2 տարի այն օրից, որ մեր հերոս տղաները զոհվեցին հանուն հայրենիքի: Սրանք այն 9-ը տղաներն են, որոնք չվախեցան թշնամու քանակից. 2020թ դեկտեմբերի 11-ի երեկոյան ժամը 20..00-ից մինչև դեկտեմբերի 12-ի ժամը 14..00-ն անհավասար մարտ են վարել թուրքական 2000-ոց «Յաշմա» հատուկ ջոկատայինների դեմ՝ պաշտպանելու ա՛յն մի թիզ հողը, որը վստահված էր իրենց: Մի թիզ հող, որը շատերի համար գուցե տարածք էր, բայց մեր հերոս տղաներն ընդունել էին որպես հայրենիք և իրենց կյանքը չխնայեցին այս մի թիզ հողի համար: Դուք Ձեր անունը ոսկե տառերով գերել եք հայ ժողովրդի պատմության մեջ: ԴՈՒՔ ԱԶԳԻ ՀԵՐՈՍՆԵՐԻ շարքում եք: Հավերժ փառք Ձեզ մեր, հերոս տղերք...»:

Ջոհրաբ ԸՌՔՈՅԱՆ

ՔԱՋԵՐԻՑ ՄԵԿԸ

Հովհաննես Ժիրայրի Հարությունյանը ծնվել է 1991թ. օգոստոսի 6-ին Երևանում: Եղել է տան կրտսեր զավակը, ծնվել է տասը տարի անց՝ ավագ եղբորից ու քրոջից հետո: Գերդաստանի 15-րդ թոռնիկն էր՝ բոլորի կողմից սիրված: Ի ծնե հանգիստ, խելացի, հետաքրքրասեր, բոլորի հետ շփվող, շրջապատին հեշտ հարմարվող տղա էր:

1988-2008թթ. սովորել և ավարտել է Երևանի Խաչիկ Սամուելյանի անվան թիվ 47 դպրոցը: Սիրում էր բոլոր առարկաները, առանձնակի հետաքրքրություն էր ցուցաբերում պատմություն առարկայի հանդեպ, հատկապես հետաքրքրվում էր պատմական դեմքերով ու իրադարձություններով՝ կարծես կանխազգալով, որ մի օր էլ ինքն է դառնալու այդ պատմության էջերից մեկի հերոսը: Իսկ մաթեմատիկայի նկատմամբ սերը օգնեց նրան, որ հետագայում ռազմի դաշտում տրամաբանական և մաթեմատիկական ճիշտ հաշվարկների շնորհիվ նպատակային գործողություններ կատարի և կյանքեր փրկի:

Դասագրքային գիտելիքներից բացի Հովհաննեսը դասեր էր առնում կենդանի զրույցներից, մասնավորապես, հայրենիքի ազատագրության պայքարի մարտիկների հետ շփումից: Նրա պապը մասնակցել է Արցախյան 1-ին պատերազմին, եղել է լեգենդար հրամանատար, Ազգային հերոս Կոմանդոսի ընկերը և իր ավանդն է ունեցել հայրենիքի պաշտպանության ու ազատագրության գործում: Մեծ ուրախություն էր Հովհաննեսի համար, երբ պապիկի մարտական ընկերները հավաքվում էին իրենց տանը, և ինքը լսում էր նրանց հուշերը պատերազմական օրերի մասին: Ինքն էլ էր մասնակցում այդ զրույցներին՝ նրանց հարցեր ուղղելով: Հովհաննեսի համար նրանք կենդանի հերոսներ էին, իսկ հայրենիքը՝ ամենաբարձր արժեքը: Նրա մոտ դեռ մանկուց այն համոզմունքն էր ձևավորվում, որ Հայրենիքը սոսկ այն վայրը չէ, որտեղ ծնվել, մեծացել է, այլ այն մեծ՝ պատմական հայրենիքը, որն ազատագրած տեսնելուն դարեր շարունակ փափագում էր յուրաքանչյուր ազնիվ հայորդի և որի դրախտային մի մասը՝ Արցախ աշխարհը, գերությունից փրկելուն էին զինվորագրվել Հովհաննեսի նման տղաների պապերն ու հայրերը, և հերթը նաև իրենցն էր:

Եվ դպրոցն ավարտելուց անմիջապես հետո Հովհաննեսը զորակոչվել է բանակ: Ծառայությունն անցել է Մարտունի-2 զորամասում: Օրինակելի վարքագիծ է ունեցել նաև ծառայության ժամանակ: Եղել է կարգապահ զինվոր՝ հարգված ու սիրված հրամանատարության կողմից: Ծառայությունն ավարտելուց հետո էլ իրեն զինվոր էր համարում, քանզի պահեստազորային էր, մասնակցում էր զորավարժություններին:

Նրա նվիրվածությունը հայրենիքի հանդեպ այնքան մեծ էր, որ անգամ վիրահատություն տանելով, դեռ լրիվ չապաքինված՝ մասնակցել է 2019թ կազմակերպված զորավարժություններին:

Հայրենիքը Հովհաննեսի համար լոկ ծննդավայրը չէր: Պատահական չէ, որ երբ լսեց 2020թ. սեպտեմբերի 27-ի չարաբաստիկ պատերազմի լուրը, առանց վարանելու նետվեց ռազմաճակատ՝ իր հետ տեղափոխելով հետախուզական մեկ վաշտ: Չէր սպասել, որ իրեն կանչեն: Ծնողի համար դժվար է այդ մասին խոսելը: Մայրը՝ Լիդա Աբրահամյանը, պատմում է, որ Հովհաննեսի համար առաջնայինը հայրենիքն էր, ասում էր՝ յուրաքանչյուր տղա պարտավոր է հայրենիքի համար նույնիսկ կյանքը զոհաբերել: Եվ եթե հայրենիքը վտանգի մեջ է, պետք չէ սպասել, ամեն մարդ իր պարտքն ունի կատարելու ու առաջինը պիտի գնա, չսպասի, որ իրեն կանչեն: Երբ զորահավաքը սկսվել էր, մայրը զգուշորեն հարցրել էր՝ քեզ կկանչե՞ն, Հովհաննեսը պատասխանել էր՝ ես չեմ սպասելու որ ինձ կանչեն, ես ինքս կգնամ: Ու գնաց:

Իսկ եղբայրը՝ Արթուրը պատմել է, որ երբ 2020թ. սեպտեմբերի 27-ին լսեցին պատերազմի լուրը, Հովհաննեսը զանգել էր զինկոմիսարիատ, թե ինչու իրեն չեն կանչում, ինքը անցած տարվա զորավարժություններ անցած խմբից է, պատրաստ է, կարող է գնալ: Ու այնքան զանգեց, մինչև կանչեցին: Իրեն որպես ավագ հետախույզ չէին ընդգրկում: Երկրաչափություն, հանրահաշիվ լավ գիտեր, ճիշտ հաշվարկներ է անում, օդուժի վրա փորձարկում, մի քանի ժամում քննություն է հանձնում և հրամանատար են նշանակում:

Մասնակցել է թեժ մարտական գործողությունների, երկու կարևոր մարտական գործողություններ կատարելուց հետո հոկտեմբերի 10-ին ընկել է քաջի մահով՝ փրկելով ընկերների կյանքը: Այդ մասին վկայում են նրա մարտական ընկերները, որոնք հաճախ են հավաքվում, պատմում նրա խիզախության մասին, թե ինչպես է վտանգելով իրեն՝ փրկել ընկերների կյանքը նահանջի պահին:

Նրանցից Էդգար Օհանյանը Հովհաննեսի բացակայությունը միշտ զգում է, քանզի նրա համար նա ավելին էր, քան ընկերը: «Բոլորս ուզում էինք նրանից սովորել»,-ասում է: Կյանքը շատ սիրող մարդ էր, բայց փիլիսոփայորեն էր վերաբերում ուրախությանը կամ տխրությանը՝ ասելով, որ դրանք միմյանց փոխկապակցված հարաբերական երևույթներ են. Չպետք է ոչ շատ ուրախ լինել ուրախությամբ և ոչ էլ շատ տխրել :

Օժտված էր կազմակերպչական մեծ շնորհքով: Ընկերները պատմում են, որ երբ հավաքվում էին մի որևէ տեղ, երկար չէին քննարկում՝ ինչ պետք է անել, եթե Հովհաննեսն իրենց հետ է, ուրեմն ամեն ինչ կազմակերպելու է, վստահում էին նրան:

Մանկուց սեր ուներ սպորտի հանդեպ, մի քանի մարզաձևերից արժանացել է պատվոգրերի ու մեդալների: Ֆուտբոլ չէր պարապում, բայդ դրա մեծ սիրահար էր, այնքան լավ էր հասկանում, որ ընկերները նրան ֆուտբոլի գիտակ էին համարում. ում ինչ հարց էր հետաքրքրում սպորտի, մանավանդ ֆուտբոլի մասին, նրան էր դիմում:

Երբևէ չէր մտածում, որ իր կյանքը կարող էր ընդհատվել, բայց և գիտակցում էր, որ եթե իր երկրային կյանքն ավարտվի, ինքն անմահանալու է:

Անմահ հերոս Հովհաննես Հարությունյանն իր անունը ոսկե տառերով գրեց Արցախյան ազատագրական պայքարի տարեգրության մեջ և միշտ կմնա սերունդների հիշողության մեջ:

Հուղարկավորվել է Եռաբլուրում, հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով և «Մարտական խաչ» շքանշանով:

Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԱՐԶԻՉ ԼԻՆԵԼՆ ԻՄ ԵՐԱԶԱՆՔՆ ԷՐ

Ճապոնական կարատե մարտարվեստով պարապող կամ առհասարակ մարտարվեստներով հետաքրքրվող մարդկանցից շատերին է հայտնի Արցախում հարգված մարզիչ Ժիրայր Պետրոսյանը: Ծնվել է 1992թ. հուլիսի 15-ին Ստեփանակերտում: Յինգ տարեկանից սկսել է հաճախել ավանդական կարատե-դո մարտարվեստի պարապմունքների: Փոքր տարիքում, դեռ լրիվությամբ չհասկանալով կարատե մարտարվեստի դերն ու նշանակությունը, փորձում էր պատճառներ գտնել պարապմունքներին չհաճախելու համար: Ծնողների կողմից չէր ողջունվում մարզումներից բացակայելը, ինչն էլ պատճառ դարձավ, որ մարզիկը ոչ միայն չբացակայի պարապմունքներից, այլեւ ընկղմվի մարտարվեստի հետաքրքրաշարժ աշխարհ, հասնի հաջողության, ունենա ձեռքբերումներ, իսկ հետագայում մարտարվեստ ուսուցանելը դառնա նրա կյանքի գործը:

Արցախյան մարզաշխարհի փայլուն ներկայացուցիչ, նախկին զինվորական եւ մարզիկ Ժիրայր Պետրոսյանը ծառայել է բանակի հատուկ նշանակության ջոկատում, այնուհետեւ ազգային անվտանգության ծառայությունում: Պատերազմի մասնակից է: Զորացրվել է որպես պահեստազորի սպա: Ունի բարձրագույն կրթություն: Եվրոպայում՝ Չեխիայի Հանրապետությունում, ավարտել է Բրիտանական ռազմական ակադեմիայի հրահանգչի դասընթացները:

Արցախում՝ լինելով «JKS» Շոտոկան ճապոնական կարատեի ֆեդերացիայի նախագահ եւ ունենալով հզոր թիմ, քրտնաջան աշխատանքի շնորհիվ կարողացել է իր թիմով մասնակցել արտերկրում կազմակերպվող տարբեր մրցումների, որոնց արդյունքում Արցախի դրոշը վեր էր ծածանվում, իսկ հայրենիք վերադառնում էին միայն հաղթական մեդալներով ու պարգեւատրումներով: Ներկայում Ժիրայր Պետրոսյանը շարունակում է մարզչական գործունեությունը Երեւան քաղաքում:

- Ինչպե՞ս առաջացավ ճապոնական շոտոկան կարատե-դո մարտարվեստով զբաղվելու եւ մարզիչ դառնալու միտքը:

- Մարտարվեստի ընտրությունը ծնողներինս էր, իսկ լինել մարզիչ՝ իմ ընտրությունն է: Դա իմ երազանքն էր, եւ ես հասա իմ նպատակին: Այն իրականացավ 2010 թվականին, երբ ես դեռ ժամկետային զինվորական ծառայության մեջ էի:

- Ի՞նչ խոչընդոտներ հաղթահարվեցին սենսեյ դառնալու եւ հարյուրավոր սաների անկեղծ սերն ու հարգանքը վայելելու ճանապարհին:

- Կարելի է սովորել լինել սենսեյ, լինել մարզիչ, բայց ես մտածում եմ, որ դա վերեւից պետք է տրված լինի մարդուն: Ինձ համար դա ուղղակի Աստծո պարգեւ էր: Իրականում երեխաներն ունեն այդ շնորհը՝ զգալ մարդուն, նրա դրական եւ բացասական էներգիան: Իհարկե, խոչընդոտներ լինում են, բայց երբ երեխան մինչեւ հարգելը, ինչու չէ նաեւ վախենալը, առաջնահերթ սիրում է իր մարզչին, ավելի է հեշտացնում ուսուցումը թե մարզչի, թե մարզիկի համար: Խոչընդոտները հաղթահարվում են, որովհետեւ չեմ վախենում պատասխանատվությունից: Գիտեմ յուրաքանչյուր երեխայի հետ անհատապես վերաբերվելու ծեւը, եւ որտեղ լինել խիստ մարզիչ, որտեղ՝ ավագ ընկեր, բարի ծնող: Դժվար է, բայց դա իմ ընտրությունն է:

- Արցախը՝ Ձեր հիշողություններում:

- Արցախը իմ մեջ պահում եմ միայն լավ հիշողություններով, քանի որ իմ կյանքի ամենակարեւոր ու ամենագեղեցիկ իրադարձությունների սկիզբը դրվեց հենց Արցախում: Նախաբլոկադային շրջանի, շրջափակման օրերի մասին կարելի է ժամերով խոսել, պատմել, բայց եթե կարճ՝ մինչ բլոկադան ապրել ենք, բլոկադայի ժամանակ գոյատեւել ենք, բլոկադայից հետո փորձում ենք շարունակել ապրել:

- Եթե հնարավորություն տրվեր վերադառնալ հայրենիք՝ Արցախ, առաջինը ի՞նչ կանեիք:

- Մինչեւ տուն մտնելը կփնտրեի շանս:

- Կցանկանայի՞ք, որ Ձեր որդին լինի Ձեր հետնորդը:

- Ամենաքիչը՝ այո: Բայց կցանկանայի, որ նա լիներ ավելին, քան ես, ամեն առումով:

- Ինչպիսի՞ ապագա եք պատկերացնում Ձեր երեխաների համար:

- Իմ պատկերացնելը քիչ է: Լավ ապագա ունենալու համար պիտի լինեն աշխատասեր, խելացի ու հաջողակ: Իսկ այդ ամենին հասնելու համար ես նրանց համար կլինեմ լավագույն օրինակելի կերպարը:

- Ձեր կյանքի կարգախոսը:

- Կարգախոսներ շատ ունեմ կյանքի տարբեր իրավիճակներում, բայց ամեն օրս ապրում եմ ինչ-որ մի բան փոխելով, ավելացնելով: Ուստի եթե այսօր ինչ-որ բան չփոխեցիր, վաղվա օրդ երեկվա պես կլինի:

- Ասում են՝ տղամարդը չպետք է լացի, դա թուլություն է: Ի՞նչ կարծիքի եք:

- Արցունքները զգացողության արտահայտում են՝ տարբեր իրավիճակներից ելնելով: Իմ կարծիքով, չկա այնպիսի տղամարդ, որ չլացի: Պարզապես այն մեկի մոտ արտահայտվում է արցունքի տեսքով, մյուսի մոտ՝ ներքուստ լացի: Դա թույլ կամ ուժեղ լինելու հետ առհասարակ կապ չունի:

- Ինչի՞ համար եք շնորհակալ:

- Առաջին հերթին Աստծոն եմ շնորհակալ ամեն իմ օրվա համար եւ նրանց, ովքեր միշտ իմ կողքին են:

Նյութում օգտագործվել են մտքեր՝ վերցված Ժիրայր Պետրոսյանի ֆեյսբուքյան էջից:

ՍԻՐԵՔ ՍՊՈՐՏԸ ԵՎ ԵՂԵՔ ԱՌՈՂՋ

Առողջ ապրելակերպի ձեւավորումն այսօր արդիական է յուրաքանչյուր մարդու համար, լինի մեծահասակ կամ երեխա, դպրոցական կամ ուսանող: Երբեմն առողջ ապրելակերպի տարրերը ծնողները դաստիարակում են իրենց երեխաների մեջ՝ սկսած նախադպրոցական տարիքից: Մանկապարտեզները, դպրոցները, ՁԼՄ-ները առողջ ապրելակերպի ակտիվ քարոզ են տանում՝ բուժական մարմնամարզություն, զանազան դիետաներ: Այս միտումը պայմանավորված է նրանով, որ ժամանակակից կյանքը մարդուց պահանջում է իր ժամանակի եւ աշխատանքի, իսկ ամենակարեւորը՝ առողջության մեծ ներդնում՝ հանուն սեփական նպատակների: Դրությունը վատթարացնում են վատ էկոլոգիան, աշխատանքի նստակյաց պայմանները, անորակ սնունդը եւ սխալ սննդակարգը, զանազան տեխնիկաներից արձակվող վնասակար ճառագայթները եւ այլն, որոնք ընդունակ են ազդելու մեր հոգեկան եւ ֆիզիկական ինքնազգացողության վրա: Չնայած ժամանակակից բժշկությունը նշանակալից արդյունքների է հասել ամենատարբեր հիվանդությունների բուժման մեջ, այնուամենայնիվ հաճախ այն անզոր է գտնվում այն դեպքերում, երբ մարդու օրգանիզմը այլեւս ի վիճակի չի լինում պայքարել հիվանդության դեմ՝ անգամ դեղամիջոցների օգնությամբ: Այդպիսի իրավիճակներից խուսափելու համար պետք է իմանալ եւ կատարել պրոֆիլակտիկ հատուկ կանոններ եւ հնարքներ, որոնք կազմում են առողջ ապրելակերպի հիմքը: Առողջ ապրելակերպը մարդու այն հմտությունն է, որը կայանում է հատուկ գործողությունների կատարման կամ ընդհակառակը՝ որոշ գործողություններից հրաժարվելու մեջ, որոնք ուղղված են առողջության պահպանման, բարելավման եւ հիվանդությունների պրոֆիլակտիկային: Վարել առողջ ապրելակերպ՝ առաջին հերթին նշանակում է իմանալ ինչն է օգտակար, ինչը՝ ոչ, ինչպես պետք է ձեւավորել գիտակցված ինքնահսկումը, կազմել ճիշտ գրաֆիկ եւ ընթացակարգ, ճիշտ սնվել:

Մեզանից յուրաքանչյուրն ունի իր ֆիզիկական եւ հոգեբանական առանձնահատկությունները, որոնցից որոշները տրվում են մեզ ժառանգաբար: Ինչ-որ մեկը, չկատարելով ոչ մի ֆիզիկական վարժություն եւ չհետեւելով բժշկական հատուկ խորհուրդների, միշտ մնում է լավ ֆիզիկական վիճակում, ինչ-որ մեկը հակված չէ մրսածությամբ պայմանավորված հիվանդանալ, մյուսն ընդունակ է քնելու չորս ժամ օրվա մեջ, բայցեւ սթափ մնալ: Այս բոլոր հատկությունները առավելապես բացառիկ են, հատուկ միայն քչերին: Վստահ կարող ենք ասել, որ աշխարհում գոյություն չունի կատարյալ առողջ մարդ, որն ունենար վերոնշյալ արժանիքները: Ահա թե ինչու է կարեւոր իմանալ մեր թույլ կողմերը, կարողանալ բոլոր անհրաժեշտ միջոցները կիրառել հիվանդություններից զգույշ մնալու համար: Դրա մեջ է կայանում առողջ ապրելակերպի դերը:

Մեզանից շատերը հաճախ մտածում են, թե ինչպես վարեն առողջ ապրելակերպ, սպորտով զբաղվե՞ն, թե՞ չափի մեջ սնվեն: Սակայն, հաճախ բացի ինքն իրեն խոստանալուց, որ «վաղվանից կփոխեմ կյանքս», մարդն այդպես էլ ոչինչ չի անում: Այդ խոստումները կարող են կրկնվել մի քանի անգամ այնքան ժամանակ, մինչեւ իրոք լուրջ խնդրի առջեւ կկանգնեն, որի դեմ պայքարելն ավելի դժվար է: Առաջնահերթ պետք է ստույգ նպատակ ունենալ, իմանալ, թե ինչի ենք ձգտում հասնել առողջ ապրելակերպով: Երկրորդ հերթին պետք է աշխատել օրեցօր եւ վստահ ձգտել դեպի նպատակ: Շատ կարեւոր է ձեւավորել գրաֆիկ, սովորություն եւ ինքնահսկում:

Ամենակարեւոր սովորություններից մեկը պետք է դարձնել ճիշտ սննդակարգը, որը կներառի չափավորված եւ բալանսավորված սնունդ: Աշխատանքի եւ հանգստի ճիշտ դասավորված ժամերը պակաս կարեւոր չեն, ինչպես նաեւ քնի, ֆիզիկական ծանրաբեռնվածության, սեփական օրգանիզմի բիոռիթմերի իմացումը եւ դրանց հետեւելը: Առողջ ապրելակերպ վարելու համար պետք է կարողանալ հասկանալ սեփական օրգանիզմը, սովորել սեփական փորձի վրա՝ անընդհատ համալրելով գիտելիքների պաշարը: Առողջությունը պահանջում է վնասակար սովորություններից լրիվ հրաժարվել: Վնասակար սովորությունները կարող են շեղել բոլոր ձգտումներից եւ նպատակներից: Պետք է հասկանալ, որ սպիրտային խմիչքները, ծխախոտը, շատակերությունը եւ այլ թուլություններ վատթարացնում են այն գործոնների ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա, որոնք պայմանավորված են վատ էկոլոգիայով, հոգեկան եւ աշխատանքային ծանրաբեռնվածությամբ:

Առողջ ապրելակերպի կարեւորագույն տարր է սպորտը: Այսօր այս կամ այն մարզաձեւով զբաղվելը ե՛ւ ակտիվ ժամանց է, ե՛ւ սիրելի զբաղմունք, ե՛ւ կենսակերպ: Առավել եւս, մարմնամարզությունը եւ սպորտը նշանակալի օգուտ են տալիս օրգանիզմին եւ առողջ ապրելակերպի անբաժան մասն են կազմում: Յուրաքանչյուր մարդ, տղամարդ թե կին, երեխա թե թոշակառու, կարող է զբաղվել սպորտով թե՛ ամառ, թե՛ ձմեռ, տնային պայմաններում կամ հատուկ մարզասրահներում, ինչի համար բավական է միայն ցանկություն ունենալ:

Սպորտը հասարակական մշակույթի ամենաարդիական երեւույթներից մեկն է: Տարբեր մարզաձեւերի հանդեպ հետաքրքրությունը միավորում է ամբողջ աշխարհի սպորտի երկրպագուների մի ողջ բանակ: Ամենուրեք՝ տրանսպորտում, սրճարանում, գրասենյակում, բանկում, սոցիալական ցանցում կարելի է խոսակցություններ լսել անցած ֆուտբոլի հանդիպման կամ կայանալիք բռնցքամարտի մենամարտերի մասին: Հազվադեպ են հանդիպում մարդիկ, ովքեր ընդհանրապես սպորտի հանդեպ հետաքրքրություն չունեն: Նույնիսկ դպրոցական հանրակրթական ծրագիրը ներառում է ֆիզկուլտուրայի դասընթացներ, երեխաների մոտ ֆիզիկական եւ մտավոր զարգացման օպտիմալ ներդաշնակություն պահելու համար:

Գեղեցկության ժամանակակից չափանիշները՝ գովազդների, մոդայի բիզնեսի, սոց-կայքերի ոլորտներում, իրենցից ներկայացնում են տղամարդու եւ կնոջ կերպարներ՝ ձգված մարզական մարմնի կառուցվածքով, առողջ մաշկով, ովքեր շատ ժամանակ են հատկացնում իրենք իրենց վրա աշխատելուն: Առաջարկվող իդեալները իրենց արտացոլումն են գտնում միլիոնավոր մարդկանց գիտակցության մեջ եւ ցանկություն առաջացնում համապատասխանել դրանց:

Դեռեւս հարյուր տարի առաջ, սննդամթերք ստանալու համար, մարդը պետք է ֆիզիկապես աշխատեր: Այսօր իրավիճակը փոխվել է: Մտավոր աշխատանքը կապված չէ նշանակալից ֆիզիկական ծանրաբեռնվածության հետ, իսկ արդի տեխնոլոգիաների եւ ենթակառուցվածքների զարգացումը՝ հիմնված նստակյաց կենսակերպի վրա, մարդու օրգանիզմի վրա օգտակար չի ազդում: Դրանից ելնելով՝ արդիականացվում է օրգանիզմի ընդհանուր վիճակի բարելավումը սպորտի շնորհիվ: Ֆիզիկական ակտիվությունը օգնում է պահպանել ֆիզիկական լավ վիճակը, նիհարել՝ անհրաժեշտության դեպքում, մարզել եւ զարգացնել մկանները, ապահովել առույգության լիցքը: Իզուր չէ ասված. «Առողջ մարմնում՝ առողջ ոգի»:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ԳՐԱԿԱՆ ԱՐՑԱԽ

ՌՈԲԵՐՏ ԵՍԱՅԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԻՐԱՎՈՐ ԼՈՒՅՍ



Լռությունը բառերի ավազանն է սուրբ Հոգու,
Խաչեն գետի ավյունը հոսում է իմ մատներից,
մագաղաթե էջերի ակոսներն եմ ոռոգում,
պատրաստվում են բերդերը խաչակրաց մարտերի:

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՐԿ ՈԳԻՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՕՋԱՆՅԱՆԻՆ

Շատ բառեր է շրջանցել ազատության մերկ ոգին՝
սեր բառի մեջ գտնելով և՛ հավատամք, և՛ ավյուն,
բայց անտառը պատվել է մառախուղով մորմոքի,
մեզնից կյանք է դարն ուզում, մարտիրոսից՝ սուրբ արյուն:

Փրկել է պետք մեր լեզուն երախից այս քաոսի,
ուրվականներ են շրջում օջախների մեջ անծուխ,
ինչ դրսից է ուղղորդվել՝ հարվածում է մեզ ներսից,
ստվերների ստվերն է հոգու լույսը հալածում:

Գաղափարի թակարդում երբ հույսերն են մոլորվել,
թափված արյան կռինչով բազեն է վեր խոյանում.
կտցին շանթ է, կրծքի տակ՝ շատրվանող հորովել-
դուռն ես բացել բառերի՝ գտնվելով խորանում:

Ազգ իմ, պրկիր երակը հիշողության մռունչի
և բեկանիր կայծակներ ապառաժի բարկությամբ,
ոլորանով Շուշիի մահերթում է Ֆայտոնչին,
վերքից ցայտող շիթերը թռչուններ են Հարության:

ԱԶԴԱԿՈՉ

Հիշողության բարուրն է ճանապարհը օրորում,
մաքառումն այս գրեթե ինքնամարտ է ստվերի,
բարկ ձայնե՞ր են մրրկում ըմբոստության հորերում,
աղոթքները չեն զատվում արյան խառը ճիչերից,
ինչ արժեք է մնացել՝ այն էլ հողմն է տըրորում:

Երազանքի բարուրն է ճանապարհը օրորում,
զոհարանից ցայտում են անրջանքի փետուրներ,
երբ դանակը ոսկորի կարմիր գիծն է որոնում,
անճարակն իր մազերը զայրույթից դեռ փետում է,
ինչ արժեք է մնացել՝ այն էլ հողմն է տըրորում:

Միասնության բարուրն է ճանապարհը օրորում,
հողից վարդեր են բխում, ապառաժից՝ կայծակներ,
պատվի կարը ցայտուն է զինվորական շորերում,
խիղճը արդեն փոթորկվել և մութ պատերն է ծակել,
ինչ արժեք է մնացել՝ այն էլ հողմն է տըրորում:

Վստահության բարուրն է ճանապարհը օրորում,
մղձավանջը տարերքի հասնում է իր ավարտին,
քաջերն արդեն կայծակի ելուստներն են որոնում,
բոցկլտում է ձյուներից Կանթեղը սուրբ Հավատի,
Սասնա ծռերն արթնացել և հողմերն են տըրորում:

Հ.Գ.
Նախապապը զարմանքից կայծակ բեղն է ոլորում.
ինչ թիրախ էր՝ հառնում է որպես ակունքը ուժի,
Սասնա ծռերն արթնացել և հողմերն են տըրորում,
վահանին է զարկվելու՝ ինչ ոսոխ էլ ներխուժի,
հաղթանակի բարուրն է ճանապարհը օրորում:

ՈԳԻՆ

Հորիզոնը իր ետևից արահետն է դեռ քարշ տալիս,
ոգու անմեռ արահետը,
անհանգո՞ւյց են օրն ու ժամը. ինքնօտարման վիհ է տարին,
բայց անշեղ է Ուխտի երթը,
ձեռ ու ոտն են մեր կապկպել ճշմարտության ճանապարհին:

Ապաստարան ցավից ելել, բայց թիրախին դեռ չե՞նք զարկել,
հույսն է ժայթքում արյան կանչից,
ժամանակի թևերի մեջ ակունքվել է երազանքը,
մեկտեղվել ենք ձախից-աջից.
լեռնագագաթ ճախրող ոգին ըմբոստության զորեղ զա՞նգն է:

Բողբոջները բոցկլտում են մեծ փոթորկի ճերմակ ճյուղին,
ներսն ու դուրսը նժարներ են,
մաքառումը վե՞ր է հիմա ոգու հացից և երկյուղից,
Տենչի աստղը ժամանել է.
մի լուսավոր մարտակոչ է երակներում զարթնող ուղին:

ԾԱՂՐԱՆԿԱՐԸ

Երբ բացվում է մի բառ անհայտ՝ զոհասեղան իր ճակատով,
ժամանակը հանց մուրացկան՝ թաքնվում է փեշերի տակ
և չի զորում նայել անգամ բիբերին այդ արյունաթոր.
մերթ հրում է իբրև զոհի, որ ոխակալ փշերին տա,
մերթ գրկում է կարծես իր իսկ ծաղրանկարը սարսափով:

Ի՞նչ փույթ, եթե ճամփան զատվի մեղքից, ինչպես օձը՝ մաշկից,
ըմբռնումը հողից ձգվող մի սանդուղք է երկնակարկառ,
որով ելնող այրն է կոփվել աներևույթ այն ապտակից,
որ երազն է բանաստեղծի, որ ավյուն է ու կենաց ծառ:

Անհաս ոգու կամրջով է անցնում հուրը հրեշտակի:

Ներկան՝ մի թուր, պատմությունն էլ ինքնապաշտպան սաղավարտ է,
մարտիրոսը հուր ձեռքերով երազներն է իր որոնում,
երբ քաոսի խուփ առանցքն է տեղաշարժել անհավատը,
խրտվիլակը տարաժամի անիվներն է դեռ գլորում.
ապագայի հաշվին ո՞վ է ներկան վատնել…

Երբ բացվում է մի բառ անհայտ՝ զոհասեղան իր ճակատով,
ժամանակը հանց մուրացկան՝ թաքնվում է փեշերի տակ
և չի զորում նայել անգամ բիբերին այդ արյունաթոր.
մերթ հրում է իբրև զոհի, որ ոխակալ փշերին տա,
մերթ գրկում է կարծես իր իսկ ծաղրանկարը սարսափով:

ՎՐԵԺ

Իմ լռության ափերից թռցընում եմ աղավնի,
հպվում քարի ջլերին, աչքալուսանք եմ առնում,
բռունցքներով իմ խղճի խփում եմ ձեր սեղանին,
բողբոջները իմ հոգու մոմաթելեր են վառում,
դարի վարքը նման է վառոդի և մետաղի,
բառերն էլ չեն համբուրվում թռիչքներով լուսակիր,
ե՞րբ էր՝ իմ ծոցը բույն էր ճերմակ-ճերմակ օրհնանքի:

Փշալարից մրմուռի մի թռչուն է արձակվում,
ներշնչանքն ինձ հանում է սև ուռկանից ստվերի,
տագնապում են ծառերը՝ չի՞ սպասվում հարձակում,
ի՞նչ խորհուրդ է փոթորկում տեղաշարժը նավերի,
ցավերիս մեջ ղողանջող մի զանգ է այս ջրվեժը.
աստղալույսով լվանում, ուժ է տալիս թևերիս,
որոնցից հանց բոցաշիթ ցայտում է դեռ վրեժը:

Աչքերի մեջ տողերիս բոցկլտում են երազներ,
հերսոտվել են լեռները, որ կրում են ձյունե թամբ,
նախապապս կարոտով, տեսնես, ի՞նչ է երազել,
հավատամքի խորանը ազդակոչն է փրկության,
երբ լցվել է անդաստանն այլասերման հեղեղը,
հոգեվարք է այս դարը՝ ճակատագրի երկվությամբ.
ի՞նչ աղոթքով են հերկում ավետարան հողերը:

ԶՈՐԵՂ ԿՅԱՆՔՆ ՈՒ ՀԱՎԵԼՎԱԾԸ

…ամեն մատուռ, սրբատեղի
երբ անխնա ավերվում են չստեղծողի հայացքի տակ,
խորացնում են անդունդները հիշողության,
մրմուռների ավազուտն է հոսում անկանգ…
Հայկական գիր և երազանք չհանդուրժող՝
բարդ թշնամի ունենք,
Աստված:
Դեղին տենդի միջանցքով է սողոսկել ներս
քաոսի այս սուրհանդակը…
Զոհի ճիչն ու աղաղակը
հավելվա՞ծն են զորեղ կյանքի,
երակներում՝ պայթող ճիչեր…

Հայաստանը… զարկված կի՞ն է,
որ նայում է խորքից մի մեծ անհայտության.
ստինքներից կաթկթում են
ճերմակ, կարմիր
մոլորակներ…

ՃԱԿԱՏԱԳՐԻ ԼԱՄՊԻ ՆԵՐՔՈ

Դեռ խաղում է մանկությունս ճակատագրի լամպի ներքո,
իսկ օրերը զոհարանից արձակվում են հանց ասուպներ,
և ցող առ ցող պսպղում է անդաստանս աստղի հերկով,
մխրճվել են գագաթները ներշնչանքի երկնքի մեջ,
ճանապարհս ուղղորդվում է հիշողության կանաչ ելքով:

Սուրհանդակը իմ պատվերով դուռն է ծեծում պատանդ սիրո,
իսկ նա ջնջոցն առել ձեռքը և իմ չասված բառն է ջնջում,
չկայացած կյանքի բակում հարկահավաք երգն է տիրող,
բախտի պահնորդ քամուց երբեք ես չստացա ո՛չ մի զիջում,
վտարանդի հույսի միջով թռչում եմ դեռ իմ խսիրով:

Օրերիս պես անջատվել եմ ժամանակի գնդասեղից,
ճանապարհ է փնտրում բառս սփոփանքի սավանի մեջ,
մի շշուկ ու խայծ եմ առնում վայրկյանների նեղ ուսերից,
նոր երազով ակունքվել եմ հիշողության ավանի մեջ,
իսկ ծառերը բողբոջել են սրսփանքից վառ կույսերի:

ՁԱՐԹՈՆՔ

Ես տեսնում եմ հողի աչքով և մտածում հունդերով,
արծիվները նշմարել են ելարանի նոր քիվեր,
երբ հատում եմ սահմանները ներշնչանքի թևերով,
գգվանքներիս ծաղիկները համբառնում են Քիրսն ի վեր:

Վանդակներից մագլցում են մռունչները քարեղեն,
ճանապարհը դեռ լիզում է աղի շերտը փառքերի,
անձրևները հանց ուխտավոր ներծծվում են հողի մեջ,
երազների փունջ եմ առնում երկնասլաց կառքերից:

այդպես արյան շիթն է պոկվում զսպանակված վերքերից,
ներշնչանքի երկինքները գոյատևման իմ առանցքն են,
մերթ՝ բռնկվում, մերթ ծուլվում եմ քարակոհակ երգերին:

ԱՐՑԱԽ

Տողերիս միջև աղոթող քանի՞ պայծառ ուխտավոր
հայրենյաց ոգու կարոտն են առնում,
գգվա՞նքը լույսի:
Տողերիս միջև աստղեր են հառնում…
Քանի՞ հողաշունչ, բաղձալի ձեռքեր
բարձրացնում են ներշնչանքները
Քիրս լեռան ձյունե պատարագն ի վեր:
Վերքերի ճերմակ շնչառության մեջ
տուրևառում են հրեշտակները,
իջնում բոցակեզ զոհասեղանին:

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» կրթամշակութային ՀԿ

✉ ք.Երևան,
Անտառային փ. 188/16 ☎ 097-22-38-27
E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները:
Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:
Թերթը վաճառքի ենթակա չէ:

Տպագրվում է «Լիմուշ» ՍՊԸ տպարանում:
Ծավալը՝ տպագրական 2 մամուլ:
Տպաքանակ՝ 500
Ստորագրված է տպագրության՝ 19.12.2025թ.: